ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ 2015-2018ԹԹ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա, ի դեմս՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա», «Հայաստանի երիտասարդ բժիշկների ասոցիացիա», «Տարածքային զարգացման եվ հետազոտությունների կենտրոն» և «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն ՍԻՎԻՏԱՍ» հասարակական կազմակերպությունների

Երևան,

2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 3

2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 13

3. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏ 19

4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 30

ՀԱՎԵԼՎԱԾ 1 35

ՀԱՎԵԼՎԱԾ 2 48

ՀԱՎԵԼՎԱԾ 3 52

1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Առկա են կոռուպցիոն ռիսկեր բուժօգնության արդյունքի գնահատման տիրույթում

Ընդհանուր առմամբ, բժշկական օգնության և ծառայությունների որակը գնահատելիս անհրաժեշտ է ռիսկերը գնահատել որակի ձևավորման երեք փուլերում, այն է՝

I Պայմաններ

1. Բուժօգնության իրականացման համար անհրաժեշտ շենքային և այլ պայմաններ և գործունեության իրականացման համար համապատասխան լիցենզիայի առկայություն.
2. Որակյալ տեխնիկա-սարքավորումներով հագեցվածություն և դրանց շահագործման թույլատվություն.
3. Որակյալ լիցենզավորված և անհրաժեշտ վերապատրաստում անցած կադրերի առկայություն.

II Բուժման գործընթաց

1. Որակյալ ախտորոշում (բաց թողնված ռիսկեր՝ *ամբուլատոր և ստացիոնար ախտորոշումների համեմատություն, առկա հզորությունների պարագայում այլ բժշկական ձեռնարկություններ հիվանդների անհիմն ուղղորդում, կրկնական և ավելի հետազոտությունների իրականացում և այլն),*
2. Որակյալ օպերատիվ կամ կոնսերվատիվ բուժօգնության տրամադրում (բաց թողնված ռիսկեր և գնահատման ցուցանիշներ՝ *բուժման միջին տևողություն, անհրաժեշտ որակի և տեսականիով դեղորայքի, վիրակապային նյութերի և բժշկական նշանակության պարագաների տրամադրում, Բ/Ձ կողմից տրամադրված կամ հիվանդի կողմից ձեռք բերված դեղորայքի նշանակման գրառում հիվանդության պատմագրերում և այլն*):

III Բուժօգնության արդյունք

1. Արդյունքի գնահատման հաստատված չափորոշիչները բացակայում են, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնական կոռուպցիոն ռիսկերը ձևավորվում են հենց այս տիրույթում, անհրաժեշտ է ուղղորդվել մի շարք գնահատման ցուցանիշներով, մասնավորապես՝

- Մեկ տարվա ընթացքում կրկնակի և ավելի անգամ նույն հիվանդության խնդրով դիմելիության ցուցանիշ,
- Կրկնակի վիրահատություններ,
- Հետվիրահատական կամ այլ բուժօգնության հետագա բարդացումներ,
- Մահացության տոկոս,
- Անփոփոխ ախտորոշմամբ դուրս գրումներ,
- Պացիենտների բավարարվածության աստիճան:

Վերոնշյալ ցանկն ամբողջական չէ:

Ինչ վերաբերվում է որակի գնահատման առաջին երկու փուլերին և այնտեղ ձևավորվող կոռուպցիոն ռիսկերին, ապա, կարելի է ասել, որ Ծրագրում դրանք հնարավորինս ներկայացված են, սակայն 3-րդ՝ բուժօգնության արդյունքի գնահատման տիրույթում ձևավորվող կոռուպցիոն ռիսկերին անդրադարձ չի կատարվել:

Հարկ է նշել, որ այստեղ բազում խնդիրներ են առկա, օրինակ՝ անփոփոխ ելքով կամ հիվանդի վիճակի վատացմամբ դուրս գրումները (այն հաճախակի բնույթ կրող դեպքերը, երբ հիվանդին դուրս են գրում, որպեսզի մահը հիվանդանոցում տեղի չունենա) պետության կողմից ֆինանսավորվում են նույն կերպ և նույն պետականորեն սահմանված արժեքով, ինչը վերանայման կարիք ունի:

Առաջարկում ենք բուժօգնության որակի ապահովման, կառավարման և բարելավման մեթոդների մշակմանն ուղղված միջոցառումների իրականացում, բուժօգնության արդյունքների գնահատման չափորոշիչների մշակում և հաստատում:

2. Առկա են կոռուպցիոն ռիսկեր բժշկական ձեռնարկություններում իրականացվող վճարովի գործունեության տիրույթում

Վերոնշյալ ռիսկերը վերաբերվում են ինչպես համակարգում վարվող վճարովի բուժօգնության սակագնային քաղաքականությանը, այնպես էլ՝ վճարովի գործունեությունից ձևավորվող հասույթի հավաքագրմանը և դրա բաշխման հստակ մեխանիզմների ներդրմանը: Ոչ ճիշտ գործունեության արդյունքում հարկային դաշտում ձևավորվող խնդիրների արդյունքում տեղի է ունենում պետական միջոցների վատնում և փոշիացում:

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով առաջարկվում է.

1. **Կարգավորել առողջապահության համակարգում գնագոյացումը բժշկական և տնտեսագիտական չափորոշիչներ մշակելու և ներդնելու ճանապարհով:**
2. **Օրենքով սահմանել վճարովի բժշկական օգնության և ծառայությունների սակագների պետական կարգավորման մեխանիզմները:**
3. **Պետական բժշկական ձեռնարկություններում գործող վճարովի բժշկական օգնության և ծառայությունների ժամանակավոր գնացուցակները յուրաքանչյուր տարի քննարկել և հաստատել պետական լիազոր մարմնի կողմից:**
4. **Բժշկական ձեռնարկություններում ներդնել ինչպես գնագոյացման, այնպես էլ՝ վճարովի գործունեության արդյունքում գոյացած հասույթի բաշխման հստակ մեխանիզմներ:**
5. **Ուժեղացնել պետական լիազոր մարմնի կողմից բժշկական ձեռնարկությունների վերահսկողությունը ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ:**

3. Առկա են կոռուպցիոն ռիսկեր և խնդիրներ Առողջապահական պետական գործակալության (այսուհետ՝ ՊԱԳ) գործունեության և վերջինիս կողմից նախատեսված կարգավորումների կիրառման գործընթացում

Բժշկական ձեռնարկությունների հետ կնքվող պայմանագրերին կից՝ ՊԱԳ-ի կողմից մշակված «Հատուկ պայմաններ»-ում նախատեսված՝ հիվանդին ողջ ծավալով դեղորայքի չտրամադրման դեպքում կիրառվող ֆինանսական որոշ պատժամիջոցներ ստիպում են բուժհաստատություններին աղավաղել իրական պատկերը և արժանահավատ տեղեկատվություն չտրամադրելու միտումներ ձևավորել, ինչը զանազան կոռուպցիոն մանևրումների տեղիք է տալիս:

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով **առաջարկվում է ՊԱԳ-ի և բժշկական կազմակերպությունների միջև կնքվող պայմանագրին կից ծառայությունների մատուցման հատուկ պայմաններով նախատեսված՝ հիվանդին ողջ ծավալով դեղորայքի չտրամադրման դեպքում կիրառվող ֆինանսական պատժամիջոցները վերանայել և թույլատրել, որպեսզի հիվանդի կողմից ձեռք բերված դեղատեսակներն ողջ ծավալով գրանցվեն հիվանդության պատմագրերում՝ ցույց տալով դեղորայքի ծախսը արտացոլող իրական պատկերը:**

Բացի այդ, ՊԱԳ-ը նախորդ տարվա վերլուծության ժամանակ որպես «փաստացի կատարողական» ընդունել է բժշկական կազմակերպությունների կողմից կատարված միայն այն աշխատանքի ծավալները, որոնք իր կողմից արդեն ընդունվել են, իսկ շատ դեպքերում, օրինակ՝ պետական պատվերի հիմքերի նույնիսկ չնչին անհամապատասխանության և թերությունների

պատճառով, տվյալ դեպքերը ոչ միայն չեն ֆինանսավորվել, այլև՝ հաշվի չեն առնվել որպես *փաստացի* կատարողական՝ հաջորդ տարվա տվյալ բժշկական կազմակերպության սահմանափակ բյուջեն կազմելիս (ինչպես հաշվի չեն առնվում նաև սահմանափակ բյուջեից դուրս իրականացված բուժօգնության դեպքերը):

Սույն մասով **առաջարկվում է ՊԱԳ-ի կողմից որպես *փաստացի* կատարողական ընդունել՝ բժշկական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների ամբողջ ծավալը, սակայն սահմանափակ բյուջեի ռիսկի գոտին գերազանցող մասի համար պետական փոխհատուցումը իրականացնել մասնակի ձևով՝ դրանով իսկ խուսափելով հարկային դաշտում ձևավորվող խնդիրներից:**

4. Առկա են խնդիրներ ամբուլատոր-պոլիկլինիկական (այսուհետ՝ ԱԱՊ) օղակում

Թեև 2006 թվականից սկսած ԱԱՊ օղակի ծառայություններն ամբողջությամբ անվճար հայտարարվեցին, սակայն բնակչության վստահությունը գրեթե չի ավելացել: Թեև պաշտոնական կայքում նշվում է, որ հաճախումներն ավելացել են մոտ 3.5 անգամ, սակայն կատարված ուսումնասիրություններն այս դաշտում ցույց տվեցին, որ հաճախումներն ավելացել են զուտ ի հաշիվ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրման, ինչը պոլիկլինիկաները իրականացնում էին նույն թվականից սկսած՝ համաձայն ՀՀ կառավարության թիվ 1717-Ն որոշման: Բուժօգնության ծավալները և որակը բովանդակային առումով գրեթե փոփոխություն չեն կրել: Բնակչության զգալի մասը ԱԱՊ օղակում դեռևս ոչ պաշտոնական վճարումներ են իրականացնում՝ հատկապես որակյալ բուժօգնություն ստանալու ակնկալիքով:

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով առաջարկվում է հետևյալը.

1. **Բարձրացնել ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ձեռնարկությունների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը:**
2. **Աշխատավարձի ձևավորման հիմքում ներառել նաև որակի և բուժման արդյունքի գնահատման մեխանիզմներ:**
3. **Կիրառել կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում և աշխատանքի խրախուսական վարձատրություն:**
4. **Կիրառել որակի բարելավման գործընթացի, արդյունքների շարունակական ստուգազննման և մոնիթորինգի մեխանիզմներ:**

5. Առկա են նաև կոռուպցիոն ռիսկեր հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության գործունեությունում

Վերոնշյալը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս տիրույթում գործունեության հաշվետվողականության մեխանիզմները գրեթե բացակայում են, և առկա է թափանցիկության ցածր մակարդակ: Մասնավորապես, սանիտարական գրքույկների առկայության և պատշաճ մակարդակով բժշկական զննության կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը թափանցիկության և հաշվետվողականության անբավարարության հետևանքով իրականացվում է բարձր կոռուպցիոն ռիսկայնության պայմաններում:

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով առաջարկվում է հետևյալը.

1. Հանրային առողջության անվտանգության պետական հսկողությունն ու վերահսկողությունը նպատակաուղղված պետք է լինի հանրային առողջության անվտանգության նորմատիվների և մարդու առողջության համար վնասակար ու վտանգավոր գործոնների նկատմամբ պահանջներ սահմանող իրավական ակտերի կատարմանը, վարչական վիճակագրական հաշվետվությունների ներկայացմանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ նորմերի կատարմանը:

2. Խստացնել աշխատողների անձնական սանիտարական գրքույկների առկայության և պատշաճ մակարդակով բժշկական զննությունների կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը՝ ապահովելով վերահսկողական գործառույթների թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

6. Առկա են ռիսկեր կենտրոնացված գնումների ոլորտում

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով առաջարկվում է հետևյալը.

1. **Ապահովել դեղորայքի պետական գնումների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը.**
2. **Վերանայել դեղերի գնումների գործընթացը կարգավորող օրենսդրությունը, մասնավորապես՝ ստեղծել մրցութային սկզբունքով դեղորայքի գնումներն իրականացնելիս առաջնահերթությունը դեղորայքի որակական հատկանիշներին տալու հնարավորություն:**
3. **Դեղի գնումների գործընթացում գնային չափորոշիչին զուգահեռ սահմանել նաև դեղերի արդյունավետությանը, որակին և դեղի օժանդակ բաղադրիչներին վերաբերող լրացուցիչ պայմաններ, որոնք պետք է նշված լինեն դեղի տեխնիկական բնութագրում:**

4. Վերանայել ներհիվանդանոցային դեղաշրջանառությունը կարգավորող ՀՀ ԱՆ 2005թ դեկտեմբերի 28-ի թիվ 1391-Ա հրամանով հաստատված կարգը՝ ապահովելով մեծաքանակ գնումների ժամանակ նոր սերնդի առավել էֆեկտիվ դեղորայքի ձեռք բերումը, դեղորաքի շարժի լիարժեք վերահսկումը բուժհաստատությունում և բժշկի կողմից նշանակված դեղորայքը հիվանդին հասցնելու հավաստիությունն ապահովող դրույթները, ինչպես օրինակ՝ հիվանդի կամ նրա հարազատի ստորագրությամբ հաստատումը:
5. Սահմանել ՀՀ ԱՆ 2013թ մայիսի 14-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի» վերանայման ողջամիտ պարբերականություն՝ այն մշտապես համալրելով նոր սերնդի արդյունավետ դեղերով:
6. Վերանայել դեղորայքի գները, քանի որ ՀՀ-ում գործում են դեղորայքի պետական գրանցման չափազանց բարձր գներ, ինչից բխում է չգրանցված, բայց անհրաժեշտ դեղորայքի ապօրինի շրջանառությունը:

7. Առկա են ռիսկեր անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրման ոլորտում

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով առաջարկվում է հստակեցնել ՀՀ կառավարության թիվ 1717-Ն որոշմամբ սահմանված անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց ցանկը և դեղերի տրամադրման մեխանիզմները:

8. Առկա են ռիսկեր ներքին կառավարման և որակի ներքին հսկողության ոլորտում

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով առաջարկվում է հետևյալը.

1. Դուրս գրվող հիվանդների համար նախատեսել տրամադրվող բուժսպասարկումից բավարարվածության ստուգման օբյեկտիվ մեխանիզմներ (գաղտնի և անանուն գնահատում), որոնց արդյունքները կարող են դառնալ տվյալ բժշկական կազմակերպության հետ ՊԱԳ-ի կողմից կնքվող պայմանագրերի վերանայման հիմք: Օբյեկտիվությունը ապահովելու նպատակով կարելի է դիտարկել, օրինակ, հասարակական կազմակերպություններին այդ գործընթացներում ներգրավելու հնարավորությունը:
2. Կատարելագործել մատուցվող բժշկական օգնության և ծառայությունների որակի նկատմամբ բժշկական կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգը և սահմանել

վերահսկողական գործառույթները երաշխավորող ընթացակարգեր՝ թե որակի հանձնաժողովների, թե՝ տնօրինության համար:

3. Առողջապահության նախարարի հրամանով կանոնակարգել քաղաքացիների կողմից իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ ԱՆ թեժ գիծ դիմելու դեպքում բողոքներին պաշտոնապես պատասխանելու ժամկետները, քաղաքացիների հետ հետադարձ կապն ապահովելու պարտականությունները և բողոքից բխող այլ իրավահարաբերությունները: Լիազոր մարմինը պարտավոր է կրել պարտականություն հիվանդին հարցի լուծման ընթացքի կամ լուծման անհնարինության մասին տեղեկացնելու, իսկ հիվանդի վերականգնված առողջապահական իրավունքների դեպքում՝ համապատասխան տեղեկատվությունը գաղտնիք չպարունակող մասով ԱՆ պաշտոնական կայքում հրապարակային դարձնելու:

9. Որպես կոռուպցիոն դրսևորում՝ առկա է պետական պատվերի հավելագրումների պրակտիկա

Սույն կոռուպցիոն դրսևորման վերացման նպատակով առաջարկվում է հետևյալը.

1. Պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվող հիմնական ծառայությունների փաթեթի (ՀԾՓ-ի) լիարժեք ֆինանսավորման համար ավելացնել պետական բյուջեով առողջապահական համակարգին տրամադրվող փաստացի ֆինանսավորումը:
2. Բարձրացնել մարզային բժշկական կազմակերպությունների պետպատվերի շրջանակներում մատուցվող բուժօգնության գները՝ հնարավորինս հասցնելով Երևանի բժշկական կազմակերպությունների նույնանուն բուժօգնության գներին և մարզային բժշկական կազմակերպություններում ապահովելով որակյալ բուժտեխնիկա, բժշկական կադրեր՝ նպաստելով որակի բարձրացմանը, ինչը կբացառի ինչպես հիվանդների հոսքը դեպի Երևանյան հիվանդանոցներ, այնպես էլ՝ կնվազեցնի պետական գումարներ ստանալու ակնկալիքով կատարվող հավելագրումների ծավալը:

10. Առկա են կոռուպցիոն ռիսկեր կադրային քաղաքականության ոլորտում

Մասնավորապես, առկա են կադրային չկարգավորված խնդիրներ սույն ոլորտում, երբ մեկ հաստատված դրույքը զբաղեցնում են երկու և ավելի ֆիզիկական անձինք՝ դրանով իսկ

ձևավորելով լուրջ կոռուպցիոն ռիսկեր թե թերզբաղվածության, թե՝ վճարվող ցածր աշխատավարձերի առումով:

Սույն ռիսկերի չեզոքացման նպատակով առաջարկվում է **բժշկական ձեռնարկությունների համար հաստատել հաստիքանախահաշվային ցուցակներ՝ հիմնված գործող նորմատիվային բազայի վրա, և իրականացնել պատշաճ հսկողություն ինչպես ձևավորվող աշխատավարձի ֆոնդի, այնպես էլ՝ աշխատավարձի վճարվող սահմանաքանակների նկատմամբ:**

11. Առկա են կոռուպցիոն ռիսկեր բուժօգնության տրամադրման մասնագիտական հարցերում

Ներկայումս, ԵՊԲՀ շրջանավարտները նեղ մասնագիտացում ստանալուն պես անմիջապես անցնում են աշխատանքի, սակայն հաճախակի վերջիններիս կողմից տրամադրված բուժօգնության որակը ցածր է լինում:

Բուժօգնության որակի պահպանման նպատակով առաջարկվում է ավարտական քննությունների և գործնական հմտությունների հանձնման ընթացքում նեղ մասնագիտական ՔՀԿ-ի ներկայացուցչի և բուժօգնության որակը վերահսկող համապատասխան կառույցի ներկայացուցչի դիտորդական առաքելության գաղափարի ձևավորումը:

12. Առկա է վերահսկողության ցածր մակարդակ, մասնավորապես՝ մասնագիտացված քաղաքացիական հասարակության կողմից

Վերահսկողության մակարդակի բարձրացման նպատակով առաջարկվում է հիվանդների բողոքների, բուժման բարդությունների, նույն հիվանդության կապակցությամբ նույն տարում կրկնակի հոսպիտալացումների, բոլոր մահվան դեպքերի քննարկման համար մշտական մասնագիտական հանձնաժողովի ստեղծում, որի անդամներում կլինեն մասնագիտացված ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, և որի եզրակացությամբ կորոշվի բուժման արդյունավետությունը, կգնահատվի բուժօգնության որակը և բուժհիմնարկի պատասխանատվության չափը:

13. Առկա են խնդիրներ՝ ոչ լիարժեք բժշկական օգնության ստանդարտների վերաբերյալ

Սույն մասով հարկ է նշել, որ պացիենտի դժգոհությունը հանդիսանում է սուբյեկտիվ ցուցանիշ, և բժշկական օգնության ստանդարտների ոչ լիարժեք լինելու պայմաններում հնարավոր չէ գնահատել այդ երևույթը:

Սույն ռիսկի չեզոքացման նպատակով **առաջարկվում է մշակել բժշկական օգնության լիարժեք ստանդարտներ:**

Ծրագրում առկա դրույթների վերաբերյալ այլ դիտարկումներ

1. Ծրագրի զանազան կետերում նշված են էլեկտրոնային առողջապահության ոչ լիարժեք աշխատանքից բխող խնդիրներ, սակայն ներկայացված չէ մեխանիզմ, որը կհանգեցնի էլեկտրոնային առողջապահության լիարժեք և անխափան աշխատանքին: E-health համակարգում կարելի է ներառել լաբորատոր-գործիքային հետազոտության գրանցման ընթացակարգ՝ հիմնվելով պացիենտի անձնական տվյալների գաղտնիության պահպանման անհրաժեշտության վրա: E-health համակարգը ծրագրային հավելված է և նախատեսված է համակարգի ամբողջական ինֆորմացիան միասնական տեղեկատվական համակարգում պահպանելու համար:
2. Ծրագրում նշված փոփոխությունները մեծամասնությամբ նախատեսված է կիրառել 51% պետական բաժնեմաս ունեցող բժշկական կենտրոններում, ինչը, մեր խորին համոզմամբ, կհանգեցնի հիվանդանոցների անհավասար շուկայական պայմանների ձևավորմանը և երկակի ստանդարտների կիրառմանը:
3. Ծրագրի 1-ին ռիսկի չեզոքացմանն ուղղված բուժօգնության որակի հետ կապված խնդիրների, մասնավորապես՝ շենքային պայմաններն ու շտապ բուժօգնության մեքենայի՝ սահմանված նորմատիվներին համապատասխանության վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ նշյալը վերահսկում և վարույթ է հարուցում տեսչական մարմինը՝ համապատասխան դիմում-բողոքի առկայության դեպքում:
4. Հարկ է նշել Ծրագրի 2-րդ ռիսկի չեզոքացմանն ուղղված 1-ին գործողության վերաբերյալ, որ կլինիկական ուղեցույցների ու գործելակարգերի տեղայնացումը ՀՀ կառավարության ծրագրային դրույթ է, և 2017 թվականի համար նախատեսված է 200 կլինիկական ուղեցույցների ու գործելակարգերի տեղայնացում:
5. Հարկ է նշել Ծրագրի 2-րդ ռիսկի չեզոքացմանն ուղղված 3-րդ գործողության վերաբերյալ, որ լաբորատոր–գործիքային ախտորոշիչ գործընթացը, որպես բուժման գործընթացի մի մաս,

ընդգրկված է բուժման գործելակարգի կամ ուղեցույցի մեջ, որը հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

6. Առաջարկվում է վերախմբագրել Ծրագրի 2-րդ ռիսկի չեզոքացմանն ուղղված գործողությունը հետևյալ շարադրանքով. *հիվանդանոցի կադրային և գործիքային հագեցվածությունից կախված լիցենզավորել բուժօգնության ծավալների ցանկ և, ըստ դրա, համալրված լիցենզավորել բժշկական կենտրոնները (օրինակ՝ վերակենդանացման բաժանմունքի բացակայության պարագայում չլիցենզավորել մեծածավալ վիրահատությունների իրականացումը):*

7. Ծրագրի 3-րդ ռիսկի չեզոքացմանն ուղղված 8-րդ գործողությամբ նշված նվերներ ընդունելու անթույլատրելիության կիրառելիությունը միայն 51 % և ավելի բաժնեմաս ունեցող բժշկական կազմակերպություններում և շնորհակալության հայտնումը բուժ. հաստատությանը, ոչ թե՝ անհատին, մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը, քանի որ բժշկական կազմակերպությունը մատուցում է բժշկական օգնություն և ծառայություն պացիենտին՝ իր կողմից համապատասխան գումարի վճարման դիմաց, հետևաբար շնորհակալությունն ընդունելի չի:

8. Ծրագրի 3-րդ ռիսկի չեզոքացմանն ուղղված 11-րդ գործողությամբ նշված՝ մի շարք մասնագիտությունների համար արտոնությունների ցանկի մշակումը, որն ավելի հրապուրիչ կդարձնի տվյալ մասնագիտությամբ զբաղվելը, օրինակ՝ հոգեբույժների և ախտաբանաանատոմների համար տարեկան երկու անգամ արձակուրդ գնալը, ավելի երկարատև արձակուրդ գնալու հնարավորությունը, չպետք է հակասեն աշխատանքային գործող օրենսդրությանը:

9. Հարկ է նշել, որ Ծրագրի 3-րդ ռիսկի չեզոքացման ուղղությամբ ՀՀ-ում մշակվում է բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման նոր համակարգ:

10. Ծրագրի 4-րդ ռիսկի չեզոքացմանն ուղղված անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հիվանդը բուժման ընթացքում պետք է ստանա ոչ թե որոշակի դեղորայք, այլ՝ ցուցված դեղորայքի ամբողջական փաթեթը: Բուժ. հաստատություններում հիվանդը դեղորայքը ստանում է մասնակի: Անհրաժեշտ է բուժ. հաստատությանը տվյալ հիվանդության բուժման լիցենզիա տրամադրելու պարագայում նաև պարտավորեցնել ունենալ հիվանդության բուժման համար անհրաժեշտ դեղորայքի **ողջ փաթեթը**:

2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Ոստիկանության արտաբյուջետային հաշվի դադարեցում

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2. հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ *արտաբյուջետային (այդ թվում՝ ավանդային) հաշիվներն են պետական կամ համայնքային հիմնարկի անվամբ գանձապետական միասնական հաշվում պետական բյուջեի միջոցների և համայնքների բյուջեների միջոցների ենթահաշվից դուրս գործող ենթահաշիվները, ինչպես նաև բանկային համակարգում գործող հաշիվները: Արտաբյուջետային հաշիվները բացվում են և նախատեսված են՝*

ա) առանձին դեպքերում նպատակային բյուջետային մուտքերի և դրանց հաշվին կատարվող ելքերի (ներառյալ՝ նպատակային բյուջետային ֆոնդերի մուտքերի և ելքերի) կատարման և առանձնացված հաշվառման համար.

բ) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ապրանքային տեսքով տրամադրված վարկերի և դրամաշնորհների դրամայնացումից առաջացող միջոցների կուտակման համար.

գ) դատական, նախաքննական և դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների անվամբ դատավարական և կատարողական վարույթի նորմերի հիմքերով իրավաբանական և ֆիզիկական անձանցից բռնագանձվող, բռնագրավվող, առգրավվող, ի պահ վերցվող կամ գրավադրվող դրամական (նաև արտարժութային) միջոցների ստացման և դրանք օրենքի հիման վրա որոշված ստացողներին հետագա փոխանցումն ապահովելու համար.

դ) պետական լիազորված մարմնի անվամբ՝ բյուջեների ժամանակավորապես ազատ միջոցների ավանդադրման, առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) առաջացող միջոցների հավաքագրման և ավանդադրման համար.

ե) պետական կամ համայնքային հիմնարկի անվամբ՝ սակարկությունների կազմակերպման հետ կապված նախավճարների գանձումը և վերադարձն ապահովելու համար.

զ) պետական հիմնարկների անվամբ՝ իրավաբանական անձանց վճարահաշվարկային սպասարկման համար.

է) պետական մարմինների անվամբ՝ որոշակի ոլորտներում առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող տնտեսական գործունեության արդյունքում առաջացող բացասական հետևանքների վերացման և ռիսկերի կառավարման հետ կապված ծախսերի ֆինանսավորման նպատակով այդ սուբյեկտների կողմից կատարվող վճարների կամ մասհանումների տեսքով ստացվող միջոցների կուտակման համար.

ը) պետական և համայնքային հիմնարկների անվամբ՝ օրենքով կամ կառավարության (համայնքի ավագանու) որոշմամբ նախատեսված աղբյուրներից այլ նպատակներով միջոցների կուտակման համար:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *պետական հիմնարկները կարող են գանձապետարանում կամ որևէ բանկում արտաբյուջետային միջոցների հաշիվներ բացել միայն Հայաստանի Հանրապետության* ***կառավարության որոշմամբ****: Օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև համայնքին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից նվիրաբերության կամ վարկի տեսքով տրամադրվող դրամական միջոցներն այդ անձանց պահանջով, պետական լիազորված մարմնի համաձայնությամբ և համայնքի ավագանու որոշմամբ կարող են տեղադրվել գանձապետարանի արտաբյուջետային միջոցների հաշիվներում կամ որևէ բանկում:*

Գտնում ենք, որ արտաբյուջետային հաշիվները հանգեցնում են կոռուպցիոն ռիսկերի, քանի որ հնարավորություն են տալիս դրանց հայեցողական օգտագործման: Միջազգային համապատասխան ձևաչափերում նույնպես նշված է դրանցում կոռուպցիոն ռիսկերի առկայության վերաբերյալ: Մասնավորապես, արտաբյուջետային եկամուտների և ծախսերի կոնսոլիդացումը բյուջե, Միջազգային դրամական հիմնադրամի Հարկային թափանցիկության կանոնագրքի համաձայն, կարող է հանրային ֆինանսների թափանցիկության գործում իրական տարբերություն տալ:

Միջազգային դրամական հիմնադրամի Հանրային ծախսերի կառավարման ուղեցույցի Բյուջեի կատարման բաժնում ևս նշված է, որ բյուջեի կատարման թափանցիկությունը, որպես կարևորագույն տարր, պահանջում է, որպեսզի բոլոր պետական գործարքներն անցնեն պետական բյուջեի միջով: Համաձայն նշյալ դրույթների՝ երբեք չպետք է ռեսուրս տրամադրել «բացառիկ ընթացակարգերի» կամ արտաբյուջետային հաշիվների համար:[1]

Միջազգային դրամական հիմնադրամը, օրինակ Մալիում, առաջադրել էր պայմաններ, որոնք մի շարք թափանցիկության միջոցներ էին ներառում՝ ուղղված կոռուպցիայի դեմ

[1] https://www.imf.org/external/pubs/ft/expend/guide4.htm

պայքարին, ներառյալ՝ արտաբյուջետային գործարքների աուդիտի ներդրմանը (և այդ աուդիտների հրապարակմանը):

Համաշխարհային բանկի «Երկրի ֆինանսական հաշվետվողականության գնահատման» (CFAA) ուղեցույցը մատնանշում է, որ անհրաժեշտ է կենտրոնանալ Պետական ֆինանսական կառավարման (PFM) համակարգի այնպիսի ասպեկտների վրա, որոնք, ամենայն հավանականությամբ, կհեշտացնեն կոռուպցիան, օրինակ՝ ոչ թափանցիկ արտաբյուջետային հաշիվները: Ֆինանսական կառավարման համակարգի թափանցիկության և հաշվետվողականության կարևորությունը՝ որպես հակակոռուպցիոն գործիքներ, նշված են նաև Համաշխարհային բանկի վերանայված՝ Երկրի Գնումների գնահատման հաշվետվություններում (CPAR), ինչպես նաև՝ Միացյալ թագավորության Միջազգային զարգացման վարչության (DFID) ուղեցույցում:

Համաշխարհային բանկի Աղքատության նվազեցման քաղաքականության մշտադիտարկման նպատակով ևս անհրաժեշտ է մշտադիտարկման ենթարկել բյուջեի կատարումը: Նման մշտադիտարկման հնարավորությունը խոչընդոտվում է արտաբյուջետային հաշիվների առկայությամբ, օրինակ՝ Վիետնամ:[2]

2. Սեկցիաներով լուսացույցների առկայությամբ պայմանավորված խնդիրներ

Ճանապարհային ոստիկանության ոլորտում հանդիպող հիմնական խնդիրներից է հանդիսանում սեկցիաներով լուսացույցները: Մասնավորապես, վարորդները տեսնելով լուսացույցի հիմնական կանաչ լույսը, չնկատելով արդեն իսկ մարված սեկցիայի առկայությունը, մտնում են խաչմերուկ և իրենց կամքից անկախ կատարում են վարչական իրավախախտում; Արդյունքում ստացվում, որ տրանսպորտային միջոցների վարորդները իրենց կամքից անկախ «չենթարկվելով» լուսացույցի ազդանշանին տուգանվում են 20-50 հազար դրամով: Մամուլի մի շարք հրապարակումներում ևս նշվում են, որ այս ոլորտում առկա են լուրջ խնդիրներ, վարորդները տուգանվում են անհիմն, ինչի արդյունքում ՀՀ ԿԱ ոստիկանության արտաբյուջետային հիմնադրամը և այս ոլորտը սպասարկող ընկերությունը տարեկան ստանում են լրացուցիչ գումարներ:

[2] Budget Support as More Effective Aid?: Recent Experiences and Emerging Lessons, Stefan Koeberle, Zoran Stavreski, Jan Walliser, 2006

Առաջարկվում է վերանայել ներկայումս գործող լուսացույցների կարգավորման գործընթացները, անհրաժեշտության դեպքում փոխարինել նոր համակարգերով՝ LED լուսացույցներով:

3. Ոստիկանության ծառայողների կարգապահական պատասխանատվությունը

ՀՀ ԿԱ ոստիկանության կայքում հրապարակվում է ընդհանուր բնույթի տեղեկատվություն ոստիկանության ծառայողներին պատասխանատվության ենթարկելու մասին: Այդ տեղեկատվությունից, սակայն, հասկանալի չէ, թե ի՞նչ բնույթի իրավախախտումներ են տեղի ունենում ծառայողների կողմից, դրանց պարբերականությունը, տարածվածությունը, որը հնարավորություն կտա միջոցներ ձեռնարկել կոնկրետ տեսակի իրավախախտումների վերացման ուղղությամբ:

Առաջարկվում է ոստիկանության կայքում հրապարակել ոստիկանության ծառայողներին պատասխանատվության ենթարկելու մասին հրամանները (պաշտպանելով վերջիններիս անհատական տվյալները), դրանցում ներառելով իրավախախտման բնույթը և ցուցաբերած գործողությունը կամ անգործությունը, որի համար ծառայողները ենթարկվում են պատասխանատվության:

Առաջարկվում է ոստիկանության կայքում հրապարակել նաև «իրավախախտ ոստիկան» կատեգորիան, որը կունենա հակակոռուպցիոն կանխարգելիչ միջոց: Հանրության քննադատություններից խուսափելու համար կնվազի հարկային և մաքսային ծառայողների կողմից իրականացվող իրավախախտումները:

Առաջարկվում է դիտարկել նաև մեկ այլ պատասխանատվության կիրառման նպատակահարմարությունը: Մասնավորապես, ՃՈ աշխատակիցներն իրենց կողմից թույլ տրված խախտումների համար պատասխանատվության չեն ենթարկվում, դրա համար շարունակում են աշխատել նույն խախտումներով: Օրինակ՝ դատարանի կողմից ՃՈ ակտն անվավեր ճանաչելու դեպքում, եթե ՃՈ ծառայությունը հայցվորի կողմից կատարված դատական ծախսերը հատուցելուց հետո ռեգրես հայցով դիմի ընդդեմ անվավեր ճանաչված ակտը կայացրած ճանապարհային ոստիկանի և հատուցման պարտականությունը դրվի այդ տեսուչի վրա, վերջինս հետագայում նման խախտումներ թույլ չի տա:

4. «Թաքնված» ճանապարհային ոստիկանների առկայությունը ճանապարհներին

Գաղտնիք չէ, որ ներկայումս ճանապարհային ոստիկանների կողմից ամենատարածված խախտումներից է համարվում «թաքնվելը», երբ «թաքնված ոստիկանը» հանկարծակիորեն հայտնվելով՝ փորձում է տուգանել վարորդներին: Այս խնդիրը հիմնականում արտահայտվում է մայրուղիներում: Գտնում ենք, որ նման գործելաոճը հարիր չէ ոստիկանության ծառայողին, և հաշվի առնելով ոստիկանին օրենքով տրված իրավապահ լիազորություններն ու գործառույթները, կարծում ենք, որ հասարակության անդամի դեմ կատարված ցանկացած գործողություն կամ անգործություն խստորեն պետք է պատժվի:

Առաջարկվում ենք ուժեղացնել ոստիկանության ծառայողների նկատմամբ վերահսկողությունը, նմանօրինակ վարքագիծը դիտարկել որպես էթիկայի կոպիտ խախտում և կիրառել կարգապահական պատասխանատվություն խիստ միջոցներ՝ ընդհուպ՝ ազատել զբաղեցրած պաշտոններից և գրանցել կադրերի ռեզերվում:

5. Խնդիր՝ ՃՈ արտադատական բողոքարկման համակարգի հետ

Ճանապարհային ոստիկանի կողմից կիրառված փոքր տուգանքները դատարաններում վիճարկելու դեպքում դատարանները հայցվորի կողմից կատարված դատական ծախսերը բռնագանձելիս հաշվի են առնում տուգանքի չափը և շատ դեպքերում հայցվորի կողմից փաստացի կատարված ծախսն ամբողջությամբ չեն բռնագանձում ՃՈ ծառայությունից: Օրինակ՝ անձը կարող է տուգանվել 5.000 ՀՀ դրամ, ակտը վիճարկելու համար փաստաբանին վճարել 25.000 ՀՀ դրամ, բայց դատարանը, հաշվի առնելով, որ տուգանքի չափն ընդամենը 5.000 ՀՀ դրամ է, որպես դատական ծախս բռնագանձի ընդամենը 10.000 ՀՀ դրամ: Արդյունքում, անձը 5.000 ՀՀ դրամի չափով ակտը վիճարկելու ընթացքում կորցնում է 15.000 ՀՀ դրամ և բնականաբար հաջորդիվ նմանօրինակ հայցապահանջներով չի դիմում դատարան, և նախընտրում է չտուգանվելու վերաբերյալ ոչ օրինական համաձայնություն ձեռք բերել անմիջապես ճանապարհային ոստիկանի հետ:

Այսպիսով ստացվում է, եթե ճանապարհային ոստիկանության ծառայության ներսում վերադասության կարգով բողոքարկումները լինեն արդյունավետ, ապա քաղաքացիները դատարան դիմելու անհրաժեշտություն չեն ունենա և ստիպված չեն լինի դիմել ոչ օրինական գործողությունների:

Առաջարկվում է վերանայել ՃՈ-ի կողմից կիրառված տուգանքների բողոքարկման արտադատական (վերադասության) համակարգը և կարգավորումները, ինչպես նաև ուժեղացնել այդ համակարգի նկատմամբ ներքին վերահսկողական մեխանիզմները:

6. Խնդիր՝ օրենսդրական կարգավորման հետ կապված

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 196-րդ հոդվածի համաձայն՝ *«Անձնագիրը կամ նույնականացման քարտը դիտավորությամբ փչացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»*

Այստեղ իրավացիորեն հարց է ծագում ապացուցման գործընթացի հետ կապված: Մասնավորապես, ինչպե՞ս է համապատասխան պաշտոնյան որոշելու, թե քաղաքացին դիտավորյա՞լ է փչացրել անձնագիրը կամ նույնականացման քարտը, թե՞ պատահաբար: Այս պարագայում պաշտոնյան կարող է որոշում կայացնել սույն արարքում անձի մեղավորությունը ճանաչելու մասին և ենթարկել նրան վարչական պատասխանատվության: Սույն զանցակազմի դիսպոզիցիան հնարավորություն է տալիս պաշտոնյային կիրառել հայեցողական լիազորություններ և ոչ օրինական եկամուտների դեպքում անձին չենթարկել վարչական պատասխանատվության:

Միաժամանակ նշենք, որ ուսումնասիրության է ենթարկվել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որի 511-րդ հոդվածի ներքո արտացոլված է վերը նշված զանցանքի փոփոխված և լրամշակված տարբերակը: Ըստ հիշյալ հոդվածի՝

«1. Անձնագիրը կամ նույնականացման քարտը դիտավորությամբ **հրապարակայնորեն** ոչնչացնելը կամ վնասելը՝ առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

2. Ուրիշի անձնագիրը կամ նույնականացման քարտն ապօրինի վերցնելը, ինչպես նաև անձնագիրը կամ նույնականացման քարտը գրավ ընդունելը՝ առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով»:

Հետևապես, առաջարկվում է դրսևորել հետևողական գործելաոճ նոր օրենսգրքով նախատեսված փոփոխությունների ընդունման ուղղությամբ, կամ նախքան նախագծի ընդունում՝

սույն հարցի կարգավորման նպատակով մշակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը»:

*Առաջարկվում է սույն փաստաթղթում ներառված **3-րդ (Ոստիկանության ծառայողների կարգապահական պատասխանատվությունը), 4-րդ («Թաքնված» ճանապարհային ոստիկանների առկայությունը ճանապարհներին), 5-րդ (Խնդիր՝ ՃՈ արտադատական բողոքարկման համակարգի հետ)** առաջարկությունները ներառել փորձագետի կողմից մշակված հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի 5-րդ գործողության շրջանակներում, այն է՝ **«Ոստիկանության աշխատակիցների կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացի իրավական որոշակիության և կանխատեսելիության ոչ բավարար մակարդակ:»***

3. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏ

1. ՊԵԿ արտաբյուջետային հաշվի դադարեցում

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2. հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ *արտաբյուջետային (այդ թվում՝ ավանդային) հաշիվներն են պետական կամ համայնքային հիմնարկի անվամբ գանձապետական միասնական հաշվում պետական բյուջեի միջոցների և համայնքների բյուջեների միջոցների ենթահաշվից դուրս գործող ենթահաշիվները, ինչպես նաև բանկային համակարգում գործող հաշիվները: Արտաբյուջետային հաշիվները բացվում են և նախատեսված են՝*

ա) առանձին դեպքերում նպատակային բյուջետային մուտքերի և դրանց հաշվին կատարվող ելքերի (ներառյալ՝ նպատակային բյուջետային ֆոնդերի մուտքերի և ելքերի) կատարման և առանձնացված հաշվառման համար.

բ) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ապրանքային տեսքով տրամադրված վարկերի և դրամաշնորհների դրամայնացումից առաջացող միջոցների կուտակման համար.

գ) դատական, նախաքննական և դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների անվամբ դատավարական և կատարողական վարույթի նորմերի հիմքերով իրավաբանական և ֆիզիկական անձանցից բռնագանձվող, բռնագրավվող, առգրավվող, ի պահ վերցվող կամ

գրավադրվող դրամական (նաև արտարժութային) միջոցների ստացման և դրանք օրենքի հիման վրա որոշված ստացողներին հետագա փոխանցումն ապահովելու համար.

դ) պետական լիազորված մարմնի անվամբ՝ բյուջեների ժամանակավորապես ազատ միջոցների ավանդադրման, առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) առաջացող միջոցների հավաքագրման և ավանդադրման համար.

ե) պետական կամ համայնքային հիմնարկի անվամբ՝ սակարկությունների կազմակերպման հետ կապված նախավճարների գանձումը և վերադարձն ապահովելու համար.

զ) պետական հիմնարկների անվամբ՝ իրավաբանական անձանց վճարահաշվարկային սպասարկման համար.

է) պետական մարմինների անվամբ՝ որոշակի ոլորտներում առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող տնտեսական գործունեության արդյունքում առաջացող բացասական հետևանքների վերացման և ռիսկերի կառավարման հետ կապված ծախսերի ֆինանսավորման նպատակով այդ սուբյեկտների կողմից կատարվող վճարների կամ մասհանումների տեսքով ստացվող միջոցների կուտակման համար.

ը) պետական և համայնքային հիմնարկների անվամբ՝ օրենքով կամ կառավարության (համայնքի ավագանու) որոշմամբ նախատեսված աղբյուրներից այլ նպատակներով միջոցների կուտակման համար:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *պետական հիմնարկները կարող են գանձապետարանում կամ որևէ բանկում արտաբյուջետային միջոցների հաշիվներ բացել միայն Հայաստանի Հանրապետության* ***կառավարության որոշմամբ****: Օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև համայնքին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից նվիրաբերության կամ վարկի տեսքով տրամադրվող դրամական միջոցներն այդ անձանց պահանջով, պետական լիազորված մարմնի համաձայնությամբ և համայնքի ավագանու որոշմամբ կարող են տեղադրվել գանձապետարանի արտաբյուջետային միջոցների հաշիվներում կամ որևէ բանկում:*

Գտնում ենք, որ արտաբյուջետային հաշիվները հանգեցնում են կոռուպցիոն ռիսկերի, քանի որ հնարավորություն են տալիս դրանց հայեցողական օգտագործման: Միջազգային համապատասխան ձևաչափերում նույնպես նշված է դրանցում կոռուպցիոն ռիսկերի առկայության վերաբերյալ: Մասնավորապես, արտաբյուջետային եկամուտների և ծախսերի կոնսոլիդացումը բյուջե, Միջազգային դրամական հիմնադրամի Հարկային թափանցիկության

կանոնագրքի համաձայն, կարող է հանրային ֆինանսների թափանցիկության գործում իրական տարբերություն տալ:

Միջազգային դրամական հիմնադրամի Հանրային ծախսերի կառավարման ուղեցույցի Բյուջեի կատարման բաժնում ևս նշված է, որ բյուջեի կատարման թափանցիկությունը, որպես կարևորագույն տարր, պահանջում է, որպեսզի բոլոր պետական գործարքներն անցնեն պետական բյուջեի միջով: Համաձայն նշյալ դրույթների՝ երբեք չպետք է ռեսուրս տրամադրել «բացառիկ ընթացակարգերի» կամ արտաբյուջետային հաշիվների համար:[3]

Միջազգային դրամական հիմնադրամը, օրինակ Մալիում, առաջադրել էր պայմաններ, որոնք մի շարք թափանցիկության միջոցներ էին ներառում՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, ներառյալ՝ արտաբյուջետային գործարքների աուդիտի ներդրմանը (և այդ աուդիտների հրապարակմանը):

Համաշխարհային բանկի «Երկրի ֆինանսական հաշվետվողականության գնահատման» (CFAA) ուղեցույցը մատնանշում է, որ անհրաժեշտ է կենտրոնանալ Պետական ֆինանսական կառավարման (PFM) համակարգի այնպիսի ասպեկտների վրա, որոնք, ամենայն հավանականությամբ, կհեշտացնեն կոռուպցիան, օրինակ՝ ոչ թափանցիկ արտաբյուջետային հաշիվները: Ֆինանսական կառավարման համակարգի թափանցիկության և հաշվետվողականության կարևորությունը՝ որպես հակակոռուպցիոն գործիքներ, նշված են նաև Համաշխարհային բանկի վերանայված՝ Երկրի Գնումների գնահատման հաշվետվություններում (CPAR), ինչպես նաև՝ Միացյալ թագավորության Միջազգային զարգացման վարչության (DFID) ուղեցույցում:

Համաշխարհային բանկի Աղքատության նվազեցման քաղաքականության մշտադիտարկման նպատակով ևս անհրաժեշտ է մշտադիտարկման ենթարկել բյուջեի կատարումը: Նման մշտադիտարկման հնարավորությունը խոչընդոտվում է արտաբյուջետային հաշիվների առկայությամբ, օրինակ՝ Վիետնամ:[4]

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կառուցվածքի և կարգավիճակի վերանայում

ՀՀ կառավարության 2016թ.-ի մարտի 10-ի N 224-Ն որոշման Հավելված N 1-ով սահմանվում է վերջինիս կանոնադրությունը, որի 35-րդ հոդվածի համաձայն՝ *ՀՀ կառավարությանն*

[3] https://www.imf.org/external/pubs/ft/expend/guide4.htm
[4] Budget Support as More Effective Aid?: Recent Experiences and Emerging Lessons, Stefan Koeberle, Zoran Stavreski, Jan Walliser, 2006

առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները՝ վարչություններ, բաժիններ, քարտուղարություն: Սույն որոշման Հավելված N 2-ով սահմանվում է վերջինիս կառուցվածքը, համաձայն որի՝ *Վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներն են.*

1. Վարչություններ

1. *Ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչություն*
2. *Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչություն*
3. *Կազմակերպման և հսկողության վարչություն*
4. *Հարկ վճարողների սպասարկման վարչություն*
5. *Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն*
6. *Ներքին աուդիտի վարչություն*
7. *Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն*
8. *Մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչություն*
9. *Մաքսային հսկողության վարչություն*
10. *Հետբացթողումային հսկողության վարչություն*
11. *Նախաբացթողումային հսկողության վարչություն*
12. *Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն*
13. *Իրավաբանական վարչություն*
14. *Քննչական վարչություն*
15. *Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչություն*
16. *Օպերատիվ հետախուզության վարչություն*
17. *Ներքին անվտանգության վարչություն*
18. *Միջազգային համագործակցության վարչություն*
19. *Անձնակազմի կառավարման վարչություն*
20. *Ֆինանսահաշվային վարչություն*
21. *Գործերի կառավարման վարչություն*
22. *Քարտուղարություն*
23. *Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն*
24. *Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն*

25 Հյուսիսային մաքսատուն-վարչություն

26 Հարավային մաքսատուն-վարչություն

27 Արևելյան մաքսատուն-վարչություն

28 Արևմտյան մաքսատուն-վարչություն

29 Արարատյան մաքսատուն-վարչություն

2. Բաժիններ

1 Ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժին

2 Գնումների համակարգման բաժին

3 Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

4 Առաջին բաժին

Այսինքն, ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմում առկա է թվով **29 վարչություն**: Հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքի համապատասխան բաժնի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերոնշյալ վարչություններում առկա են ընդհանուր թվով **152 բաժին,** գումարած 3 նշյալ բաժիններից՝ Ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժինը, Գնումների համակարգման բաժինը և Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը և գումարած 2 ՊՈԱԿ-ներ՝ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ը:[5]

Նշենք նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կանոնադրության 36-րդ հոդվածի համաձայն՝ *Կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը և գործառույթները հաստատում է կոմիտեի նախագահը:*

Կատարենք համեմատություն մեր հարևան Երկրի՝ Վրաստանի հետ, որտեղ, Վրաստանի Եկամուտների ծառայության կանոնադրության համաձայն, գործում են ընդամենը թվով **11 վարչություն:** Դրանք են՝

1 Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն,

2 Աուդիտի վարչություն,

3 Հանրային հարաբերությունների և մարքեթինգի վարչություն,

[5] http://www.taxservice.am/ATS_Structure.aspx. Հարկ է նշել, որ թեև նշյալ կանոնադրությամբ առանձին նշված է նաև Առաջին բաժինը, սակայն վերջինս գտնվում էր վարչությունների ներքո:

4 *Միջազգային հարաբերությունների վարչություն,*

5 *Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն,*

6 *Ադմինիստրատիվ վարչություն,*

7 *Իրավական վարչություն,*

8 *Վեճերի վարչություն,*

9 *Ծառայության վարչություն,*

10 *Հարկային մշտադիտարկման վարչություն,*

11 *Իրավաբանական անձերի մաքսային վարչություն:*[6]

Հարկ է նշել, որ Վրաստանում վերոնշյալ **11 վարչությունում գործում են ընդամենը 39 բաժիններ՝ ՀՀ-ում գործող 157 ստորաբաժանման փոխարեն:** Այստեղ հարկ է նշել, որ Transparency International հակակոռուպցիոն ընկալման համաթվի համաձայն՝ **Վրաստանը զբաղեցնում է 44-րդ հորիզոնականը, իսկ ՀՀ-ն 113-րդ:** Վրաստանում նշյալ համակարգի կառուցվածքի օպտիմալացումը տեղի է ունեցել 2011թ. մաքսային ինստիտուցիոնալ բարեփոխումների համատեքստում:[7]

Բացի այդ, ՀՀ ԿԱ ՊԵԿ կանոնադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հանրապետական գործադիր մարմին է, իսկ Վրաստանի Եկամուտների ծառայության կանոնադրության համաձայն՝ Վրաստանի ֆինանսների նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով նախաքննություն կատարելու իրավազորությունն ի թիվս այլ մարմինների վերապահված է նաև պետական եկամուտների կազմում գտնվող հարկային և մաքսային մարմիններին:* ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված քննչական ենթակայության կարգավորումների համաձայն՝ *այդ մարմինների կողմից հիմնականում քննվում են համապատասխանաբար տնտեսական գործունեության դեմ ուղղված և մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործությունները:* Ընդ որում, հարկ է ընդծել այն հանգամանքը, որ քննչական ենթակայության վերաբերյալ իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ գործերով քննություն իրականացնելու **իրավազորությունը բացառիկ չէ:** Մասնավորապես, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները կարող են քննվել նաև ՀՀ քննչական կոմիտեի քննիչների

[6] http://www.rs.ge/Default.aspx?sec_id=5151&lang=2
[7] http://www.traceca-org.org/uploads/media/Geo-20.12.2011.pdf

կողմից, իսկ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործությունները նաև ՀՀ ազգային անվտանգության քննիչների կողմից:

Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսրքի 253-րդ հոդվածի համաձայն՝ *նախաքննություն իրականացնող մարմինների շարքին է դասվում տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարող կենտրոնը*: Այդ կենտրոնում գործող քննչական մարմինը, Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 269-րդ հոդվածի համաձայն, ունի տնտեսական հանցագործություններով նախաքննություն կատարելու բացառիկ իրավազորություն[8]:

Ուկրաինայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 17-րդ կետում տրվող «քննիչ» եզրույթի հասկացությունից, ինչպես նաև 38-րդ հոդվածում սահմանվող քննչական մարմինների ցանկից պարզ է դառնում, որ քննչական իրավազորությամբ օժտված մարմինների շարքին է դասվում հարկային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող գործակալությունը: Ուկրաինայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածում սահմանվող քննչական ենթակայության կանոնների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ մարմնին վերապահված են տնտեսական գործունեության հետ կապված հանցագործություններով նախաքննություն կատարելու իրավազորությունը: Ընդ որում, հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ ենթակայության վերաբերյալ իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ գործերով նախաքննություն կատարելը գտնվում է հարկային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող գործակալության բացառիկ իրավասության ներքո, նույնիսկ այն դեպքում, երբ այդպիսի հանցագործությունը կատարվում է պաշտոնատար անձանց կողմից[9]:

Ինչպես պարզ դարձավ վերոնշյալ վերլուծությունից, Վրաստանի Եկամուտների ծառայությունում առկա չեն քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներ: Սակայն, Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *քրեական գործերով նախաքննություն կատարելու իրավազորությունն ի թիվս այլ մարմինների, վերապահված է նաև Վրաստանի*

---

[8] տես Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը http://www.seepag.info/download/rep_moldova/Criminal%20Procedure%20Code%20RM.pdf

[9] տես Ուկրաինայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը https://rm.coe.int/16802f6016

Հանրապետության ֆինանսների նախարարության քննիչներին[10]: Քննչական ծառայությունը համարվում է Վրաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առանձին ստորաբաժանում: Այն գործում է ինչպես Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ «Վրաստանի Ֆինանսների նախարարության քննչական ծառայության մասին» օրենքի հիման վրա: Ընդ որում, այն ոչ միայն իրականացնում է տնտեսական, ֆինանսական բնույթ կրող հանցագործությունների, այլ նաև վարչական իրավախախտումների կապակցությամբ իրականացնում է քննություն: Հարկ է նաև նշել, որ այդ մարմինն ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող առանձին ստորաբաժանում[11]:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ առկա է անհրաժեշտություն ուսումնասիրություն կատարելու հետևյալի վերաբերյալ.

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի կառուցվածքի օպտիմալացում,
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ կարգավիճակի վերանայում,
3. Տնտեսական գործունեության դեմ ուղղված և մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործությունների բացառիկ իրավազորության սահմանում. որպես հնարավոր տարբերակ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի քննչական և օպերատիվ-հետախուզական լիազորությունների դադարեցում:

3. ՀՀ ֆինանսների նախարարությանը ՊԵԿ-ի նկատմամբ վերահսկող գործիքների տրամադրում

Առաջարկվում է հարկ վճարողների հարկային պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող միասնական հաշիվների կառավարման լիազորություն տրամադրել նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Վերոնշյալ առաջարկն իրականացվել է միջազգային փորձի, մասնավորապես՝ Ուկրաինայի վերջին՝ հարկային ոլորտի բարեփոխումների հիման վրա:

2017թ.-ի հունվարի 1-ին ուժի մեջ մտավ «Ուկրաինայի հարկային օրենսդրության փոփոխությունները (Ուկրաինայում ներդրումային միջավայրի բարելավման մասին)» թիվ 5368 օրենքը (այսուհետ ՝ «Հարկային բարեփոխումների մասին» օրենք):

---

[10] տես Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը https://matsne.gov.ge/ka/document/download/90034/64/en/pdf

[11] տես այդ մարմնի կառուցվածքը http://old.mof.ge/en/4756

Հարկային բարեփոխումների մասին օրենքով նախատեսված են մի շարք փոփոխություններ, որոնցից սույն առաջարկի շրջանակում կանդրադառնանք հարկերի կառավարմանը վերաբերող դրույթներին:

Հարկային բարեփոխումների մասին օրենքը նախատեսում էր Պետական հարկային ծառայության բոլոր հարկային բազաների կառավարման փոխանցում՝ Ֆինանսների նախարարությանը: Այս փոխանցումն ավարտվել է 2017թ.-ի մարտի 1-ին և նպատակ ունի բարելավել Ֆինանսների նախարարության վերահսկողական գործառույթները Պետական հարկային ծառայության նկատմամբ:[12]

4. Բարձրացնել հարկային և մաքսային ծառայողների վարձրատրություն պարգևատրման համակարգի միջոցով՝ արտաբյուջեի հաշվին:

Մաքսային համաշխարհային կազմակերպության (WTO) 1993թ.-ի Արուշայի հռչակագրով ամրագրված են 10 ղեկավար սկզբունքներ, որոնք մաքսային մարմինների կողմից պետք է կիրառվեն Ազգային բարեխղճության ծրագրերը մշակելիս: Դրանց թվին է պատկանում մարդկային ռեսուրսների կառավարումը: Մարդկային ռեսուրսների կառավարման պրակտիկան, որն ապացուցել է իր արդյունավետությունը մաքսային ծառայությունում կոռուպցիան վերահսկելու և վերացնելու գործում, ներառում է նաև բավարար աշխատավարձի տրամադրումը՝ ապահովելով, որ մաքսային աշխատակազմը պահպանի արժանապատիվ կենսամակարդակ: Աֆրիկյան 3 երկրներում՝ Գանա, Թանզանիա և Ուգանդա, բարձրացրել են հարկային և մաքսային ոլորտի աշխատողների աշխատավարձը: Վերջինս վերցված է Գվատեմալայի փորձից, որը որակվել է ԵԱՀԿ-ի կողմից որպես կոռուպցիայի հաղթահարման լավագույն պրակտիկաներից մեկը սույն ոլորտում:

ՀՀ-ում Հարկային և մաքսային ծառայողները ֆինանսապես ցածր են ապահովված, ինչի արդյունքում վերջիններս իրենց ֆինանսական դրության բարելավման նպատակով կարող են դիմել կոռուպցիոն քայլերի:

Առաջին առաջարկի չընդունման պարագայում առաջարկում ենք նշյալ առաջարկն իրականացնել ՊԵԿ արտաբյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

[12] http://www.cms-lawnow.com/ealerts/2016/12/ukraine-new-tax-reform-law-adopted-by-parliament-1?sc_lang=fr

5. Կարգավորել մաքսային հսկողության, մասնավորապես՝ հետբացթողումային հսկողության ոլորտը՝ համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված ընթացակարգերին և ժամկետներին

Յուրաքանչյուր գործով մաքսազերծման գործընթացը Հայաստանում կարող է տևել մի քանի ժամից մինչև մի քանի օր:

Բացի այդ, առկա են չարաշահումներ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ընտրողականություն կիրառելու հայեցողական լիազորությունների իրականացման գործընթացում:

Հարկ է նշել, որ հետբացթողումային հսկողության ոլորտը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված ընթացակարգերին:

6. Ներդնել Գործարարների շահերի պաշտպանի ինստիտուտը և մշակել «Գործարարների շահերի պաշտպանի» մասին ՀՀ օրենքի նախագծի փոփոխությունների փաթեթ (Վերլուծությունը՝ կից Հավելված 1)

Ներկայումս մշակվել է «Գործարարների շահերի պաշտպանի» մասին ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ սակայն անհրաժեշտ է կատարել փոփոխություններ՝ Պաշտպանի գործունեության և գործարարների շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ապահովելու նպատակով:

7. Կատարել մասնավոր դետեկտիվների ինստիտուտի ներդրման նպատակահարմարության ուսումնասիրություն (Համառոտ վերլուծությունը՝ կից Հավելված 2)

Բիզնեսում կոռուպցիան հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել մասնավոր դետեկտիվների ինստիտուտի ներդրման հնարավորությունը, որը ներդրվում է այժմ Ուկրաինայում:

8. ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում ներդնել տրանսպորտային միջոցների մաքսային վճարների առցանց հաշվիչ (Վերլուծությունը՝ կից Հավելված 3)

Կոռուպցիոն ռիսկերի առաջացման հիմնական նախադրյալը՝ դա անձի անիրազեկությունն է, ինչը կամա թե ակամա հնարավոր է դարձնում տարբեր չարաշահումների առաջացումը: Նշյալ հաշվիչի ներդրումը հնարավորություն կտա անձին նախքան տրանսպորտային միջոցների ներկրումը, ինքնուրույն նշված գործիքի կիրառմամբ պարզել, թե՞ ինչ կարժենա ՀՀ տարածք ներկրվող տրանսպորտային միջոցների մաքսային վճարները և հարկերը:

4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Կոռուպցիոն ռիսկեր՝ դպրոցական խորհուրդների ձևավորման գործընթացում և գործունեության շրջանակներում

Խնդրի հիմնավորում

Ներկայում գործող դպրոցի կառավարման խորհուրդների **ձևավորման կարգն ու կառուցվածքը** չի նպաստում հանրակրթության նպատակների իրականացմանը, այն պարզ պատճառով, որ խորհրդի ներկա լիազորություններով և կառուցվածքով վերջիններս շատ ձևական են: Շատ դեպքերում հատկապես փոքր գյուղական համայնքների դպրոցի խորհրդի անդամների և դպրոցի տնօրինության և/կամ ուսուցչական կազմի անդամների մեջ կա շահերի բախում վերջիններիս ընտանիքի անդմաների և մերձավոր հարազատների դպրոցի խորհրդի կազմում ընդգրկված լինելու պարագայում:

Գաղտիք չէ, որ դպրոցի խորհուրդի ակտիվությունը նկատվում է հիմնականում դպրոցի տնօրենի «ընտրությունից՝ ընտրություն» գործընթացում և որպես կանոն խորհրդի ընտրությունը հանգում է այն թեկնածուի վրա, որը վայելում է լիազոր մարմնի (ավագ դպրոցների պարագայում՝ ԿԳՆ-ի, հիմնական և միջնակարգ դպրոցների պարագայում՝ մարզպետարանների, իսկ Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աջակցությունը: Վերջին շրջանում արձագանքներ կան, որ խորհուրդները որոշ դեպքերում լիազոր մարմնի ձեռքում «մահակ» են դառնում այն տնօրենների նկատմամբ, որոնք զրկվում են լիազոր մարմնի աջակցությունից ու բարեհաճությունից:

Անհրաժեշտություն կա նաև վերանայել և հստակ սահմանել **խորհրդի անդամին** ուղղված չափանիշներն ու պահանջները, քանի որ ներկա պարագայում գործող կարգով քիչ չեն այն դեպքերը, որ խորհրդի անդամ է նշանակվում կրթության և դաստիրակության հետ կապ չունեցող անձինք: Այս երևույթը հակտապես տարածված է համայնքի քվոտայով ներկայացված անդամների շրջանում՝ առավելապես փոքր գյուղական համայնքներում:

Բարեփոխման հիմնավորումը

Վերանայելով դպրոցի խորհրդի ձևավորման կարգը՝ **«մեկ դպրոց, մեկ խորհուրդ»** կարգից անցնելով **«մեկ խորհուրդ, մի քանի դպրոց»** կամ **«դպրոցական գոտիներ»** կարգին, միաժամանակ նոր չափանիշներ սահմանելով խորհրդի անդամի և կազմի նկատմամբ, ինչպես նաև մեծացնելով

խորհրդի իրական դերակատարությունը դպրոցների կառավարման գործում, հնարավոր է հասնել հանրակրթության որակի բարձրացմանը, այս ոլորտում շահերի բախումների և կոռուպցիոն այլ ռիսկերի նվազեցմանը: Այս գործընթացը համահունչ է համայնքների խոշորոցման քաղաքականությանը, նպաստում է որոշում կայացնող շրջանակների միջև փոխադարձ զսպմանն ու հակակշռմանը, և հաջողություն կունենա, եթե միաժամանակ ներդրվի որոշում կայացնող դերակատարների անձնական պատասխանատվության ինստիտուտը: Վերջինիս կարող է նպաստել դպրոցի կառավարման խորհրդի անդամներին և տնօրինությանը հանրային կերպարներ դարձնելը՝ հանրակրթական ընդհանուր դաշտը և, մասնավորապես, դպրոցական կյանքը մամուլի և հանրային վերահսկողության այլ միջոցների մշտական ուշադրության կենտրոնում պահելը:

Առաջարկություններ

- Մարզերի կտրվածքով, իսկ Երևանի պարագայում՝ վարչական շրջանների, խմբավորել աշխարհագրական և տարածքային մերձակայությամբ գտնվող դպրոցները մեկ դպրոցական գոտու տարածքում: Տվյալ գոտին կունենա **բոլոր դպրոցների համար մեկ ընդհանուր խորհուրդ**: Մեկ դպրոցական գոտում ընդգրկված դպրոցների առավելագույն քանակը սահմանելու համար հավելյալ հետազոտության կարիք կարող է լինել խորհրդի աշխատանքի մաքսիմալ արդյունավետության նկատառումով: Ավագ դպրոցների պարագայում՝ մարզային կտրվածքով կարող է գործել մեկ կամ երկու խորհուրդ՝ պայմանավորված տվյալ մարզում ավագ դպրոցների քանակից, իսկ Երևանի պարագայում՝ ավագ դպրոցների խորհուրդների թիվը, բնականաբար, ավել կլինի:
- Խորհուրդները պետք է ունենան իրավական կարգավիճակ, դպրոցի տնօրենի հետ պայմանագիրը պետք է կնքի խորհուրդը/խորհրդի նախագահը: Դպրոցի տնօրենի առաջարկով խորհուրդն է հաստատում դպրոցի տնօրենի տեղակալներին:
- Խորհուրդները պետք է ունենան մշտական նստավայր իրենց կողմից սպասարկվող դպրոցական գոտու տարածում ընդգրկված հիմնական բնակավայրում, որը կարող է գտնվել հանրային որևէ շինության կամ դպրոցի մեջ: Դպրոցների և խոորհրդի միջև պետք ա հաստատվեն հստակ գործող կապի միջոցներ՝ փոստային, էլեկտրոնային և այլն: Խորհրդի որոշումները, նիստերի ժամանակացույցը պետք է հրապարակվեն լիազոր մարմնի էլ. կայքում ինչպես նաև տվյալ գոտու դպրոցների էլ. կայքերում:
- Խորհրդի անդամների քանակը կարող է տատանվել կախված սպասարկվող տարածքի մեծությունից, օրինակ՝ 9-15 հոգուց բաղկացած: Պետք է սահմանվի խորհրդի անդամների

հստակ չափորոշիչներ, ինչպես նաև քվոտաներ՝ գիտակրթական, մշակութային, հասարակական, բիզնես ոլորտների և համայնքների ներկայացուցիչների համար։ Խորհուրդը իր անդամների կազմից կընտրի խորհրդի նախագահ և քարտուղար։ Խորհրդի անդամները կաշխատեն հասարակական հիմունքներով, բացառությամբ՝ խորհրդի քարտուղարի, որը վարձատրվող հաստիք կլինի։

- Խորհրդի անդամության թեկնածուներին կառաջադրի լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանումները, իսկ խորհուրդների կազմի հաստատման իրավասությունը կվերապահվի լիազոր մարմնի ղեկավարին։
- Վերանայել և հստակեցնել Խորհուրդների և լիազոր մարմինների համապատասխան ստորաբաժանումների՝ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունների և ԿԳՆ հանրակրթության վարչության, միջև լիազորությունների բաշխումը, փոխադարձ կապի մեխանիզմները։

2. Կոռուպցիոն ռիսկեր հետբուհական համակարգում՝ գիտական աստիճանների շնորհման կարգում

ՀՀ ԲՈՀ գիտական աստիճանաշնորհման կարգը ի թիվս այլ կարգավորումների, սահմանում է հայցորդներին, նրանց ատենախոսություններին, ինչպես նաև գիտական ղեկավարներին ու մասնագիտական խորհուրդներին ուղղված գիտական կոչման պարտադիր պահանջներ։ Այս ուղղությամբ վերջին շրջանում իրականացվել են բարեփոխումներ, մասնավորապես՝ հայցորդների ներկայացված պահանջներում, այն է՝

Թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների համար անհրաժեշտ է առնվազն վեց գիտական հոդված, այդ թվում առանց համահեղինակների՝ երկուսը, կամ առնվազն երեք գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն մեկ հոդված Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում և մեկ հոդված առանց համահեղինակների։*

Դոկտորական ատենախոսությունների պաշտպանության համար անհրաժեշտ է առնվազն քսան գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն հինգը՝ Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում։ Հայագիտական բնույթի աշխատանքների դեպքում անհրաժեշտ է առնվազն քսան գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն

*մեկը՝ Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում **:*[13]

Համարժեք բարեփոխում չի արվել գիտական ղեկավարների և մասնագիտական խորհուրդների անդամների համար սահմանված պահանջների շարքում: Արդյունքում ստացվում է, որ հայցորդը պետք է ունենա առնվազն մեկ հրապարակում ազդեցության գործակից ունեցող Web of Science կամ Scopus շտեմարաններում, այն է թե միջազգային ճանաչում, մինչդեռ այդ նույն հայցորդի գիտական ղեկավարը և գիտական կոչում շնորհող հանձնաժողովի անդամները կարող են նմանատիպ միջազգային ճանաչում չունենալ:

Այս անհամաչափությունը առնվազն անընկալելի է, ուղղակիորեն ազդում է գիտական պրոդուկտի որակի վրա, կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, չարաշահումների տեղիք է տալիս: Լուծումը շատ պարզ է. գիտությունը, այնպես ինչպես այլ ոլորտները՝ սպորտը, կրթությունը, առողջապահությունը և այլն, պետք է բարձրացնել միջազգային մակարդակի, և որի ամենապարզ և արդյունավետ ցուցիչը ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հրապարակումներն են:

ՀՀ ԲՈՀ գիտական աստիճանների շնորհման կարգում անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները

---

* Սույն պարբերության պահանջները չեն տարածվում այն անձանց վրա, որոնց ատենախոսության թեման սահմանված կարգով հաստատվել է մինչև 10.03.2015թ.՝ թեկնածուական ատենախոսությունը ոչ ուշ, քան ուսումնառության համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պաշտպանելու պայմանով: Նման դեպքերում թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության համար անհրաժեշտ է առնվազն 3 գիտական հոդված, այդ թվում՝ 1-ը առանց համահեղինակների:

** Սույն պարբերության պահանջները չեն տարածվում այն անձանց վրա, որոնց դոկտորական ատենախոսության թեման սահմանված կարգով հաստատվել է մինչև 2015թ. մարտ ամիսը, և որոնց դոկտորական ատենախոսությունը մինչև 2018թ. մարտի 10-ը համապատասխան հաստատությունում նախնական քննարկում է անցել: Նման դեպքերում գործում է նախկին կարգը, որն է. «Դոկտորական ատենախոսությունների պաշտպանության համար անհրաժեշտ է առնվազն քսան գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն հինգը՝ օտարերկրյա պետություններում տպագրվող գրախոսվող գիտական հրատարակություններում /հայագիտական բնույթի աշխատանքների դեպքում՝ երկու/»:

Գիտական ղեկավարների մասով

Հայցորդի ղեկավար կարող է լինել միայն միջազգային հեղինակություն ունեցող գիտնականը: Գիտնականի միջազգային հեղինակության չափման մեխանիզմներից ամենաարդյունավետը այդ գիտնականի միջազգային պարբերականներում ունեցած հոդվածների քանակն է: Ընդ որում տվյալ հոդվածները պետք է տպագրված լինեն միայն ազդեցության գործակից ունեցող միջազգային պարբերականներում, որոնք հաշվառված են Scopus կամ Web of Science շտեմարաններում: Հայցորդ ղեկավարելու համար տվյալ գիտնականը պետք է ունենա նման պարբերականներում առնվազն 3 գիտական հոդված, պետք է լինի այդ հոդվածների միակ հեղինակը, իսկ խմբով աշխատանքների դեպքում՝ առաջին հեղինակը:

Մասնագիտական խորհուրդի նախագահի մասով

Մասնագիտական խորհուրդների նախագահ կարող է լինել միայն այն գիտնականը, որը բավարարում է վերը նշված հայցորդի ղեկավարի համար անհրաժեշտ պահանջներին:

Մասնագիտական խորհուրդի անդամների մասով

Մասնագիտական խորհուրդների անդամ կարող է լինել միայն այն գիտնականը, որը բավարարում է վերոնշյալ պահանջներին, այն տարբերությամբ, որ երեք հոդվածի փոխարեն վերջինս պետք է ունենա առնվազն մեկ հոդված:

Այս առաջարկի մասով մեկ հարց հաստատ կառաջանա. այն է թե ի՞նչ անել, եթե համապատասխան քանակի գիտնականներ չունենք, որոնք կբավավարեն նշված պահանջներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Գործարարների շահերի պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հիմնավորմամբ նշվում է, որ *Նախագծի ընդունման նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում ներդնել գործարարների շահերի պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որը կապահովի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց մասնակցությամբ կազմակերպություններում Գործարարների շահերի ներկայացումն ու պաշտպանությունը, Գործարարների դիմումների արդյունավետ, անվճար և ողջամիտ ժամկետներում ուսումնասիրությունը: Գործարարների շահերի պաշտպանն իր գործունեությամբ պետք է նպաստի գործարար միջավայրի բարելավմանն ու կոռուպցիայի կանխարգելմանը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, Կազմակերպությունների ու պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության բարձրացմանը՝ պետություն-մասնավոր հատված մշտական երկխոսության ապահովման միջոցով:*

Այժմ, ներկայացնենք Նախագծի խնդրահարույց դրույթները, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ Նախագծի ընդունման նպատակի իրականացման համար:

1. **Խնդիրներ՝ կապված Գործարարների իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) կազմավորման կարգի, մասնավորապես՝ <u>վերջինիս անկախության</u> հետ**

Հիմնավորմամբ նշված է, որ ***Պաշտպանի անկախության և գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով: Պաշտպանին նշանակում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ հինգ տարի ժամկետով՝ Գրասենյակի հոգաբարձուների խորհրդի առաջադրած թեկնածուներից:***

Սակայն, Նախագծով առաջարկվող կարգավորումների համաձայն, մասնավորապես՝ 12-րդ հոդվածի,

1. *Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):*
2. *Խորհուրդը կազմված է ինն անդամներից, որոնցից՝*

1) երեքը գործադիր իշխանության ներկայացուցիչներ են,

2) երեքն ընդգրկվում են միջազգային կազմակերպություններից,

3) երեքը՝ գործարարների շահերը ներկայացնող կազմակերպություններից:

3. *Խորհրդի՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:*
4. *Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված կազմակերպությունների ներկայացուցիչները Խորհրդի կազմում ընդգրկվում են այդ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետի համապատասխան դիմումի հիման վրա առաջադրված թեկնածուներից: Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից դիմում է ներկայացվել երեքից ավելի կազմակերպությունների, դրանց ներկայացուցիչները Խորհրդի կազմում ընդգրկվում են իրենց միջև ձեռքբերված համաձայնությամբ (կոնսենսուսի միջոցով):*
5. *Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված կազմակերպությունների ներկայացուցիչները Խորհրդի կազմում ընդգրկվում են մրցութային կարգով: Մրցութային հանձնաժողովի կազմում հավասարապես ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մրցույթի ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*
6. *Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել այն կազմակերպությունները՝*

   1) որոնք ունեն գործարար ոլորտի՝ վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա գործունեության փորձ.

   2) որոնց կանոնադրությամբ ամրագրված է բիզնես գործունեությամբ զբաղվելը.

   3) որոնք ունեն միջազգային կազմակերպությունների հետ գործարար ոլորտում համագործակցության փորձ և կներկայացնեն համատեղ իրականացված ծրագրերի արդյունավետության վերաբերյալ միջազգային գործընկեր կազմակերպության դրական եզրակացություն (գնահատական):
7. *Խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, որը՝*

   1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

   2) դատապարտվել է հանցագործության կատարման համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:
8. *Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:*

Նշյալ իրավակարգավորումների վերաբերյալ ունենք հետևյալ մտահոգությունները.

Միջազգային փորձի ուսումնասիրությունը այս հարցի շուրջ վկայում է, որ առկա են պաշտպանի նշանակման կարգի բազմաթիվ մոդելներ: Մասնավորապես, առկա են երկրներ, որտեղ

- **Պաշտպանին նշանակում է կառավարության գլուխը. Ավստրալիայի** Փոքր Բիզնեսի և Ընտանեկան Ձեռնարկությունների Օմբուդսմենը նշանակվում է **Կառավարության ղեկավարի** (Governor-General) կողմից՝ գրավոր ակտի միջոցով: **Ուկրաինայում** Բիզնես օմբուդսմենի ընտրության վերաբերյալ վերահսկող խորհրդի որոշումները հետագայում **ներկայացվում են կառավարության հաստատմանը: Վրաստանում** Հարկային Օմբուդսմենին նշանակում է **վարչապետը՝ համաձայնացնելով խորհրդարանի ղեկավարի հետ:**
- **Պաշտպանին նշանակում է երկրի նախագահը. Ղազախստանի** բիզնես օմբուդսմենը նշանակվում է Ղազախստանի Հանրապետության **նախագահի հրամանագրով** և հաշվետու է վերջինիս: **Ռուսաստանում** բիզնես օմբուդսմենը նշանակվում է **ՌԴ նախագահի** հրամանագրով՝ 5 տարի ժամկետով և հաշվետու է վերջինիս: ՌԴ նախագահը բիզնես օմբուդսմենի ընտրությունը կատարում է ինքնուրույն՝ **հաշվի առնելով բիզնես համայնքի կարծիքը: ԱՄՆ-ում Փոքր բիզնեսի հարցերով զբաղվող Ազգային օմբուդսմենը նշանակվում է նախագահի կողմից:**
- **Պաշտպանի նշանակումն իրականացվում է նախարարի մակարդակով. Ֆրանսիայում** Հաշտարարը, ով իրականացնում է ֆիզիկական (հարկատուներ, սպառողներ, առևտրականներ, ընկերության տնօրեններ և այլն) կամ իրավաբանական անձանց (ընկերություն, ասոցիացիա և այլն) կողմից նախարարության ծառայությունների դեմ բերվող անհատական բողոքների քննություն, նշանակվում է Ֆրանսիայի տնտեսության, ֆինանսների և արդյունաբերության **նախարարի** որոշմամբ՝ 3 տարի ժամկետով:

Ինչպես պարզ դարձավ միջազգային փորձի ուսումնասիրությունից, Պաշտպանի նշանակման տարբերակները բազմազան են: ՀՀ-ն որդեգրել է վարչապետի կողմից նշանակման մոդելը՝ Ուկրաինայի փորձի հիման վրա: Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ի տարբերություն ՀՀ-ի, Ուկրաինայում խորհուրդն ուղղակի ներկայացնում է վարչապետի հաստատմանը, և ոչ թե, վարչապետն է նշանակում Պաշտպանին՝ Գրասենյակի հոգաբարձուների խորհրդի առաջադրած թեկնածուներից: Բացի այդ, ՀՀ վարչապետը հաստատում է խորհրդի անհատական կազմը և նշանակում է խորհրդի երեք գործադիր իշխանության ներկայացուցիչներին: Հետևաբար, թեև հիմնավորմամբ նշվում է, որ ստեղծված են Գրասենյակի անկախության երաշխիքներ, գտնում ենք, որ նման իրավակարգավորումների պարագայում խարխլվում է անկախության սկզբունքը, քանի որ

Գրասենյակը և պաշտպանը գտնվում են ուղղակի, նույնիսկ՝ երկաստիճան մակարդակի կախվածության մեջ գործադիրից:

Ինչ վերաբերվում է խորհրդի անդամ՝ երեք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչ թեկնածուներին, գտնում ենք, որ իրենց միջև ձեռքբերված համաձայնությամբ (կոնսենսուսի միջոցով) ընդգրկվելու կարգը անհրաժեշտ է փոխարինել ռոտացիոն կարգի:

Ինչ վերաբերվում է խորհրդի անդամ՝ երեք գործարարների շահերը ներկայացնող կազմակերպությունների ներկայացուցիչ թեկնածուներին, գտնում ենք, որ այստեղ ևս անհրաժեշտություն է առաջանում ռոտացիոն կարգ կիրառելու: Բացի այդ, նախագծի տառացի վերլուծության պարագայում անհասկանալի է և ենթակա է հետագա ճշգրտման այն հարցը, արդյո՞ք վերջիններիս ընտրող՝ մրցութային հանձնաժողովի կազմում հավասարապես ընդգրկված Հայաստանի Հանրապետության կառավարության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիսանում են մնացած 6 խորհրդի անդամները, թե՝ ոչ: Դրական պատասխանի պարագայում բախվում ենք մի իրավիճակի, երբ 3 անդամի գործընկեր 6 անդամները ընտրելու են նրանց, ինչն առհասարակ չի կարող հանդես գալ որպես Գրասենյակի անկախության երաշխիք:

Մեկ այլ մտահոգություն, որն առկա է սույն կարգավորման շրջանակներում. մասնավորապես՝ Խորհրդի անդամների միջև անհավասար մրցակցության պայմանների ստեղծում, և այստեղ իրավացիորեն հարց է առաջանում, ինչո՞ւ Խորհրդի անդամներից 6-ը նշանակվում են պարզեցված ընթացակարգով, իսկ գործարար շահերը ներկայացնող կազմակերպությունները՝ մրցույթի հիման:

Բացի այդ, հետագա ճշգրտման է ենթակա խորհրդի կազմում ընդգրկվելիք կազմակերպություններին ներկայացվող պահանջներից մեկին վերաբերող դրույթը, որի համաձայն վերջինիս կանոնադրությամբ ամրագրված է բիզնես գործունեությամբ զբաղվելը: Գտնում ենք, որ գործարարների շահերի պաշտպանությամբ զբաղվող մի շարք կառույցներ (BSO – Business Support Organizations, BMO – Business Membership Organizations) կարող են ուղղակիորեն չզբաղվել բիզնես գործունեությամբ, այլ՝ բիզնես գործունեությամբ զբաղվող կառույցների շահերի պաշտպանությամբ: Բացի այդ, գործարարների շահերի պաշտպանություն իրականացնում են նաև հասարակական կազմակերպությունները, որոնք սակայն չեն զբաղվում բիզնես գործունեությամբ:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ Գրասենյակի կազմավորման կարգի իրավանորմերը մշակվել են Ուկրաինայի բիզնես օմբուդսմենի խորհրդի կազմավորման կարգի հիման վրա, որը բաղկացած է ներքոնշյալ խմբերի լիազորված ներկայացուցիչներից.

1. *Ուկրաինայի կառավարություն,*
2. *Միջազգային ֆինանսական կազմակերպություններ (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն),*
3. *Բիզնես ասոցիացիաներ (Ուկրաինայի ամերիկյան առևտրի պալատ, Եվրոպական բիզնես ասոցիացիա, Ուկրաինայի գործատուների ֆեդերացիա, Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատ և Ուկրաինայի արդյունաբերողների և գործարարների լիգա) (2-րդ և 3-րդ խմբերի կազմը հետագայում կարող է ընդլայնվել):*

Հարկ է նշել, որ ի տարբերություն ՀՀ առաջարկվող կարգավորումների, Ուկրաինայի օրենսդրությամբ 3-ի փոխարեն խորհրդում նախատեսված է 5 հասարակական սեկտորի ներկայացուցչի ներկայություն, բացի այդ օրենսդրորեն սահմանված է, որ վերջինիս կազմը հետագայում կարող է ընդլայնվել: Վերոնշյալը սահմանված է նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների համար: Հետևաբար, գտնում ենք, որ հիմնավորմամբ բացակայում է այն դրույթը, թե ինչո՞ւ է ընտրվել թվակազմը հենց 3, երբ այն երկրի իրավակարգավորումներում, որի հիմքի վրա կառուցվել է ՀՀ առաջարկվող իրավակարգավորումները (Ուկրիանա), նախատեսված է ավելի լայն թվակազմ:

Ռուսաստանի փորձի ուսումնասիրությունը սույն հարցի շուրջ ևս վկայում է, որ հասարակական սեկտորի շահագրգիռ բոլոր կողմերի կարծիքն է հաշվի առնվում. ՌԴ բիզնես օմբուդսմենին կից գործում է 13 անձից բաղկացած հանրային խորհուրդ, որոնք հիմնականում բիզնես շահերը ներկայացնող հասարակական կառույցների ներկայացուցիչներ են:

2. Խնդիրներ՝ կապված Գրասենյակի հաշվետվողականության մեխանիզմների հետ

Նախագծի 32-րդ հոդվածով սահմանված են հաշվետվողականության մեխանիզմները՝ տարեկան և եռամսյակային հաղորդումները: Մասնավորապես,

1. *Պաշտպանը Գրասենյակի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը մինչև հաջորդ տարվա առաջին եռամսյակի ավարտը ներկայացնում է Խորհուրդ:*
2. *Պաշտպանը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնում է գործարար միջավայրում առկա խնդիրների, գործարարների գործունեության խոչընդոտների վերաբերյալ հաղորդում՝*

միաժամանակ ներկայացնելով դրանց վերացմանն ուղղված միջոցների վերաբերյալ առաջարկություններ:

Հարց է առաջանում, թե ինչու՞ է նախատեսված տարբերակված մոտեցում Խորհրդի և ՀՀ վարչապետի նկատմամբ: Մասնավորապես, ինչու՞ ներկայացնել եռամսյակային հաղորդումներ ՀՀ վարչապետին և տարեկան հաղորդում՝ Խորհուրդ: Առաջարկում ենք նախատեսել միևնույն եռամսյակին ստանդարտները՝ և Խորհրդի, և՝ Վարչապետի համար:

3. Խնդիրներ՝ կապված Պաշտպանի գործունեության արդյունավետության հետ

Պաշտպանի գործունեության արդյունավետությունը կախված է վերջինիս լիազորությունների ծավալից, որոնք սահմանված են Նախագծի 6-րդ հոդվածով, որի համաձայն՝

(…) Պաշտպանը սույն օրենքով սահմանված կարգով՝

1) ներկայացնում է գործարարների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, Կազմակերպություններում.

2) իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, Կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների կամ անգործության հետևանքով գործարարների օրինական շահերի խախտման վերաբերյալ դիմումների ուսումնասիրություն և իր իրավասությունների շրջանակում ձեռնարկում Գործարարների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցներ.

3) իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի ուսումնասիրություն այն դեպքերում, երբ առկա է գործարարների իրավունքների և օրինական շահերի զանգվածային խախտումների կամ գործարարական գործունեության իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվություն կամ հարցն ունի հանրային մեծ հետաքրքրություն կամ խախտումները կրում են համակարգային բնույթ, ինչպես նաև այլ դեպքերում, եթե պաշտպանը գտնում է, որ առկա է սեփական նախաձեռնությամբ հարցի ուսումնասիրություն սկսելու անհրաժեշտություն.

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումների իրականացման հետ կապված ներդրողների դիմում-բողոքների ուսումնասիրություն և վերջիններիս ներկայացնում դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, այդ թվում՝

ա. դատական և արտադատական ընթացակարգերում օժանդակում է ներդրողներին՝ տրամադրելով իրավաբանական խորհրդատվություն.

բ. Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնում է ներդրումների իրականացման հետ կապված օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ.

5) Գործարարներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ ներկայացնելով առկա օրենսդրական կարգավորումները և ցույց տալով խնդրի լուծման այլընտրանքային մեխանիզմները.

6) իրականացնում է նախնական քննարկումներ և հարցումներ՝ Գործարարներին ցույց տալով խնդրի կարգավորմանն ուղղված միջոցները և տեղեկատվություն տրամադրելով այլ մարմինների և ծառայությունների վերաբերյալ այն դեպքերում, երբ իրավունքի վերականգնմանն ուղղված միջոցների ձեռնարկումը դուրս է պաշտպանի իրավասությունների շրջանակից.

7) իրավասու է իր կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությանը և վարչապետին ներկայացնել գործարարական գործունեության խոչընդոտների և օրենսդրական բացերի վերացմանն ուղղված առաջարկություններ՝ գործարարների իրավունքների պաշտպանության, գործունեության խոչընդոտների վերացման և գործարար միջավայրի բարելավման նպատակով.

8) միջոցներ է ձեռնարկում գործարար միջավայրի հետ համագործակցության, ինչպես նաև գործարարների և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, Կազմակերպությունների միջև երկխոսության ապահովման համար.

9) իրավասու է դիմումների ուսումնասիրության ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կազմակերպություններից և դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և տեղեկություններ.

10) իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կազմակերպություններից և դրանց պաշտոնատար անձանցից (բացառությամբ՝ սահմանադրական դատարանի անդամի, դատավորի, քրեական վարույթն իրականացնող մարմինների՝ իրենց վարույթում գտնվող հարցերի առնչությամբ) տվյալ մարմնի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստանալ դիմումի ուսումնասիրության ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներ.

11) իրավասու է ծանոթանալ դիմումում բարձրացված հարցերին առնչվող, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին.

12) իրավասու է իր առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով ներգրավել փորձագետների և մասնագետների:

Նախ, հարց է առաջանում, ինչու՞ է ցանկում սպառիչ թվարկված այն մարմինները և կազմակերպությունները, որտեղ վերջինս ներկայացնելու է գործարարների շահերը, քանի որ դրա անհրաժեշտությունը կարող է առաջանալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և ՀՀ կամ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ կազմակերպություններում, որոնց գործունեությունն անմիջականորեն առնչվում է գործարար ոլորտին կամ այլ կերպ ազդում է գործարարների շահերի կամ գործարար միջավայրի վրա, այլև՝ օրինակ՝ միջազգային կազմակերպությունների կամ գործարար ոլորտին առնչվող հասարակական կազմակերպությունների հետ հարաբերություններում, որոնք ստեղծված չեն ՀՀ կամ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ: Գտնում ենք, որ սույն նորմը ենթակա է լրացման:

Վրաստանի իրավակարգավորումներով նախատեսված է, որ հարկային օմբուդսմենը մասնակցում է հարկային խորհրդի նիստերին: Սույնի կապակցությամբ առաջարկում ենք օրենսդրորեն նախատեսել, որ Պաշտպանը մասնակցի գործարար ոլորտին վերաբերող՝ ՀՀ վարչապետին, ՀՀ ֆինանսների նախարարին և այլոց կից խորհրդի նիստերին:

Այնուհետև, նշված է, որ Պաշտպանն ընդունելության իրավունք ունի Կառավարության անդամների, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների, համայնքների ղեկավարների, ինչպես նաև իր հարցմանը, առաջարկին պատասխանելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց մոտ: Հարց է առաջանում, թե ինչու՞ է նախատեսված ընդամենը ընդունելություն իրավունք: Զուգահեռներ անցկացնելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 9-րդ հոդվածների հետ՝ կարելի է տեսնել, որ վերջինս *բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում իր իրավասությունների շրջանակում լիազորված է* ***անարգել այցելելու*** *իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամասեր, ինչպես նաև ազատությունից զրկման վայրեր: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, դրանց պաշտոնատար անձինք կամ ներկայացուցիչները պարտավոր են երաշխավորել ազատության սահմանափակման կամ ազատությունից զրկման վայրում գտնվող անձի հետ Պաշտպանի կամ նրա ներկայացուցչի անարգել և խորհրդապահական կարգով հաղորդակցվելու հնարավորությունը: Պաշտպանի կամ*

նրա ներկայացուցիչների՝ այդ անձանց հետ առանձնազրույցները ենթակա չեն միջամտության կամ գաղտնալսման:

Զուգահեռներ անցկացնելով ՌԴ բիզնես օմբուդսմենին տրված լիազորությունների շրջանակի հետ, անկհայտ է, որ, ի թիվս այլ գործառույթների, վերջինս կարող է **անարգել մուտք գործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, առանց հատուկ թույլտվության այցելել «ձեռնարկատիրական հոդվածներով» կալանավայրերում և քրեակատարողական հիմնարկներում գտնվող մեղադրյալներին և դատապարտյալներին, մասնակցել ձեռնարկություններում պետական մարմինների կողմից անցկացվող ստուգումներին և այլն: Առաջարկում ենք համանման կարգավորումներ նախատեսել նաև սույն նախագծում:**

Ավելին, Նախագծով նշված է, որ *Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատարանների գործունեությանը և քրեական գործերով մինչդատական վարույթին:* Զուգահեռներ անցկացնելով ՌԴ բիզնես օմբուդսմենին տրված լիազորությունների շրջանակի հետ, ակնհայտ է, որ, ի թիվս այլ գործառույթների, **վերջինս կարող է ձեռնարկատերերի և նրանց խմբերի իրավունքների պաշտպանության համար դիմել դատարան, բողոքարկել արբիտրաժային դատարանների՝ ուժի մեջ մտած դատական ակտերը: Առաջարկում ենք համանման կարգավորումներ նախատեսել նաև սույն նախագծում:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 4-րդ հոդվածով սահմանված է, որ *Պաշտպանի գործունեությունն ուղղված է* *գործարար միջավայրի բարելավմանը, վարչարարական խոչընդոտների և գործարար ոլորտում* *կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,* ինչպես նաև հաշվի առնելով՝ Ռուսաստանի բիզնես օմբուդսմենի ինստիտուտի հիմնական նպատակները՝ *կոռուպցիան* *ծնող գործոնների վերհանումը և* *հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության ապահովումը,* *օրինագծերի նախապատրաստումն ու մշակումը՝ նպատակ ունենալով չեզոքացնել* *կոռուպցիային* *նպաստող պատճառներն ու պայմանները,* *կոռուպցիայի* *կանխարգելմանն ուղղված մեթոդական աշխատանքների կազմակերպումը և Բիզնես ոլորտի գործողությունների կառավարումը՝* *հակակոռուպցիոն քաղաքականության* *իրականացման համատեքստում,* գտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ ևս անհրաժեշտ է սահմանել հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համատեքստում նշյալ իրավակարգավորումները:

Բացի այդ, գտնում ենք, որ Պաշտպանի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է սահմանել, որ Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, հասարակական կամ վճարովի հիմունքներով կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդներ՝ կազմված գործարար շահերի բնագավառում անհրաժեշտ

գիտելիքներ ունեցող անձանցից, որոնք կաշխատեն մշտական հիմունքներով, ոչ թե՝ ուղղակի ներգրավել փորձագետների, ինչպես նաև, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է դիմել փորձագիտական կազմակերպությունների:

Բացի այդ լիազորությունների շրջանակում պետք է նշել, որ Պաշտպանը քննում է նաև բիզնես շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցների դիմումները, ոչ թե միայն գործարարների դիմումները, քանի որ շատ գործարարներ կարող են իրենց բողոքները ներկայացնել բիզնես շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցներին:

4. Խնդիրներ՝ կապված Պաշտպանին առաջադրվող ոչ բավարար պահանջների հետ

Պաշտպանին առաջադրվող պահանջները սահմանված են Նախագծի 7-րդ հոդված 3-րդ և 4-րդ մասերով, որոնց համաձայն՝

3. Խորհրդի կողմից որպես Պաշտպանի թեկնածու կարող է ընտրվել 30 տարին լրացած և գործարար միջավայրում հեղինակություն ունեցող այն անձը, ով ունի տնտեսագետի կամ իրավաբանի որակավորում և առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: Պաշտպանի թեկնածուին Խորհրդի որոշմամբ կարող են ներկայացվել լրացուցիչ պահանջներ: Պաշտպանի թեկնածուների ընտրության ընթացակարգը սահմանվում է Գրասենյակի կանոնադրությամբ:

4. Խորհրդի կողմից որպես Պաշտպանի թեկնածու չի կարող ընտրվել այն անձը, ով՝

1) դատապարտվել է հանցագործության կատարման համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

2) ով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 4-րդ հոդվածով սահմանված է, որ ***Պաշտպանի գործունեությունն ուղղված է*** *գործարար միջավայրի բարելավմանը, վարչարարական խոչընդոտների և գործարար ոլորտում* ***կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,*** գտնում ենք, որ Պաշտպանին առաջադրվող պահանջները պետք է ներառեն նաև հակակոռուպցիոն և բարեխղճության բարձր արժանիքներ կրելու պահանջը:

Բացի այդ, որպեսզի ապահովվի, որ Պաշտպանի թեկնածուն կապված չէ նախկին կամ գործող կառավարության կամ քաղաքական ուժերի հետ ընդհանրապես, այսինքն՝ վերջինս իրապես անկախ է, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել, որ Պաշտպանի թեկնածուն չպետք

է երբևէ աշխատած լինի որպես պետական պաշտոնատար անձ որևէ մակարդակում վերջին 5 տարվա ընթացքում: Առաջարկվող իրավակարգավորումների պարագայում որպես Պաշտպանի թեկնածու կարող է հանդես գալ Խորհրդի՝ Գործադիր իշխանության 3 ներկայացուցիչներից որևէ մեկը, ինչի պարագայում կրկին խարխլվում է Պաշտպանի իրապես անկախ լինելու սկզբունքը:

5. Խնդիրներ՝ կապված Պաշտպանին լիազորությունների դադարեցման կարգի հետ

Պաշտպանի լիազորությունների դադարումը և դադարեցումը սահմանված են Նախագծի 9-րդ հոդվածի ներքո: Մասնավորապես.

1. Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա՝

1) հրաժարականի մասին գրավոր դիմումը պաշտոնապես ներկայացնում է Խորհուրդ.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.

3) նրա նկատմամբ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, մեղադրական դատավճիռ.

4) նա մահացել է:

2. Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Խորհրդի առաջարկությամբ ՀՀ վարչապետի կողմից, եթե նա՝

1) երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում ավելի քան 3 ամիս անընդմեջ չի իրականացրել իր պաշտոնեական լիազորությունները.

2) չի պահպանել Պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումները.

3) ի հայտ են եկել փաստեր, որոնք վկայում են, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

Ուկրաինայի կարգավորումների համաձայն՝ *Բիզնես օմբուդսմենի ազատման վերաբերյալ խորհրդի որոշումն ընդունվում է ձայների մեծամասնությամբ, այնուհետև ներկայացվում է Ուկրաինայի կառավարության հաստատմանը:*

Հետևաբար, առաջարկում ենք, որ ՀՀ-ում ևս ոչ թե խորհուրդն ուղղակի առաջարկություն ներկայացնի Վարչապետին Պաշտպանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ, իսկ վերջինս՝ դադարեցնի, այլ, Ուկրաինայի օրենսդրական կարգավորումների նման, խորհուրդը որոշում ընդունի լիազորությունների դադարեցման վերաբերյալ, իսկ Վարչապետն ուղղակի հաստատի: Բացի այդ, սահմանված չէ, թե խորհուրդը ինչպես է առաջարկություն ներկայացնելու: Առաջարկում ենք սահմանել, որ միայն ձայների մեծամասնության պարագայում է հնարավոր

խորհրդի կողմից որոշում ընդունել Պաշտպանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ՝ սահմանելով Պաշտպանի անկախության ևս մեկ երաշխիք:

Հարկ է նաև ընդգծել, որ բացակայում է իրավանորմ, որի համաձայն Պաշտպանի լիազորությունները կդադարեցվեն, եթե վերջինս իր պարտականությունների կոպիտ խախտումներ թույլ տա: Առաջարկվում է անդրադառնալ օրենսդրական մակարդակով նաև նշյալ խնդրին:

6. Խնդիրներ՝ կապված Պաշտպանի անձեռնմխելիության երաշխիքների բացակայության հետ

Սույն նախագծով ամրագրված չեն Պաշտպանի անձեռնմխելիության երաշխիքները: Այնինչ, «Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

1. Պաշտպանն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել Պաշտպանի՝ իր կարգավիճակից բխող գործունեության շրջանակներում, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար:

2. Պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել, Պաշտպանը կարող է ազատությունից զրկվել միայն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

3. Պաշտպանն առանց Ազգային ժողովի համաձայնության կարող է զրկվել ազատությունից, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պաշտպանին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

4. Պաշտպանն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո չի կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել պաշտոնավարման ընթացքում իրեն հասցեագրված դիմումների կամ բողոքների, դրանց ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի էության կամ իր կայացրած որոշումների կապակցությամբ:

5. Պաշտպանի՝ իր լիազորությունների իրականացման հետ կապված նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական հաղորդումները և հաղորդակցության այլ ձևերը ենթակա են վերահսկման միայն դատարանի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդությամբ, եթե դա կապված է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարումը կանխելու կամ բացահայտելու անհրաժեշտության հետ:

Գտնում ենք, որ համանման կարգավորումներ անհրաժեշտ է նախատեսել նաև սույն նախագծի շրջանակներում:

7. Այլ տեխնիկական խնդիրներ

Հարկ է նաև նշել տեխնիկական մի խնդրի մասին, որ Նախագծում օգտագործվում են և՛ գործարար գործունեություն, և՛ բիզնես գործունեություն եզրույթները, և ցանկալի կլիներ որդեգրել դրանցից մեկը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՏԵԿՏԻՎՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄ

Գտնում ենք, որ բիզնեսում կոռուպցիան հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել մասնավոր դետեկտիվների ինստիտուտի ներդրման հնարավորությունը, որը ներդրվում է այժմ Ուկրաինայում: Սա հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել կոռուպցիայի դեմ պայքարը:

2017թ. ապրիլի 13-ին Ուկրաինայի խորհրդարանը ընդունել է «Անձնական դետեկտիվի (հետաքննողի) գործունեության մասին» օրենքը (այսուհետ՝ «Օրենք»): Օրենքը սահմանում է մասնավոր դետեկտիվների աշխատանքը կարգավորող իրավական դաշտը և սկզբունքները, թվարկում է մասնավոր դետեկտիվի մասնագետ լինելու որակավորման համար անհրաժեշտ պահանջները, կարգավորում է մասնավոր հետաքննչական պրակտիկայի կազմակերպումը և իրականացումը և բացահայտում է մասնավոր դետեկտիվների գործողությունները, իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքի համաձայն՝ անհատը պարտավոր է ունենալ իրավաբանական կրթություն որպես մասնավոր դետեկտիվ աշխատելու համար, ավարտել համապատասխան մասնավոր դետեկտիվների (հետաքննողների) վերապատրաստման ծրագիրը կամ ունենալ իրավապահ մարմիններում առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ և ձեռք բերել մասնավոր դետեկտիվ գործունեության իրականացման լիցենզիա: Անձնական դետեկտիվների գործունեության լիցենզավորման և վերահսկման մարմինը Ուկրաինայի ազգային ոստիկանությունն է:

Օրենքը սահմանում է նաև մասնավոր դետեկտիվների կողմից տրամադրվող գործողությունների ցանկը: Մասնավորապես, մասնավոր դետեկտիվները կկարողանան.

- Հավաքագրել և հետաքննել դատավարության համար պահանջվող տեղեկատվությունը՝ դատավարության կողմի հետ կնքած պայմանագրի հիման վրա:
- Վերլուծել շուկան, փնտրել և հավաքել գործարար բնույթի տեղեկատվությունը բաց տվյալների աղբյուրներից և իրականացնել գնահատումներ պոտենցիալ բիզնես գործընկերների ֆինանսական վճարունակության, ակտիվների և արժանահավատության վերաբերյալ;
- Պարզաբանել կենսագրական տեղեկությունները և անհատին վերաբերող այլ տեղեկություններ (իրենց գրավոր համաձայնությամբ), որոնց հետ կնքվում է

աշխատանքային կամ ցանկացած այլ պայմանագիր վերջիններիս գործարար կապերը բացահայտելու նպատակով, այդ թվում՝ հաճախորդի՝ Ուկրաինայում և արտերկրում գտնվող մրցակիցների հետ;

- Որոնել անհետ կորած անձանց, պարզել նրանց անհետացման պատճառները և հանգամանքները, որոնել ընտանեկան կամ ընկերական կապերը կորցրած անձանց;
- Որոնել անհետ կորած գույքը և կենդանիներին (և գողության, և՝ կորստի դեպքում);
- Միջոցներ ձեռնարկել հաճախորդի օրինական իրավունքների և շահերի վերաբերյալ կորստի ենթարկված (բացակայող) տեղեկությունների վերարտադրման համար;
- Որոնել և հավաքել տվյալներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաճախորդի համար դիմելու դատարան կամ իրավապահ մարմիններին՝ պաշտպանելու իր իրավունքները և շահերը;
- Հայտնաբերել ապօրինի (չթույլատրված) տեղեկատվության հավաքագրումը, որը վերաբերում է հաճախորդի առևտրային գաղտնիքներին՝ հետագայում օգտագործելու կամ բացահայտելու նպատակով, ինչպես նաև հայտնաբերել փաստեր ֆիզիկական անձանց մասին գաղտնի տեղեկատվության ապօրինի (չթույլատրված) հավաքագրման վերաբերյալ:
- Փնտրել, բացահայտել և գրանցել այն դեպքերը, երբ հաճախորդին պատկանող մտավոր սեփականության իրավունքները օգտագործվում են ապօրինի կերպով, ինչպես նաև՝ անբարեխիղճ մրցակցության դեպքերը:
- Որոնել պարտապաններին և այն անձանց, որոնք չեն կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները:
- Պաշտպանել հաճախորդին պատկանող սահմանափակ տեղեկատվությունը (առևտրային, արդյունաբերական, մասնագիտական գաղտնիքներ):

Օրենքի համաձայն, մասնավոր դետեկտիվներին արգելվում են, մասնավորապես.

- Հավաքագրել տվյալներ անձի անձնական կյանքի և քաղաքական կամ կրոնական հայացքների վերաբերյալ՝ առանց նրանց գրավոր համաձայնության:
- Հավաքագրել տեղեկատվություն պետական մարմինների վերաբերյալ, որը պարունակում է պետական գաղտնիք:
- Իրականացնել այնպիսի օպերատիվ-հետախուզական գործողություններ, որոնք գտնվում են օպերատիվ (իրավապահ) ստորաբաժանումների բացառիկ իրավասության ներքո:

Երկարատև սպասված օրենքը մասնավոր դետեկտիվի գործունեության վերաբերյալ առաջին կարգավորումն է 1991թ.-ի Ուկրաինայի անկախությունից ի վեր: Ուկրաինայում

մասնավոր դետեկտիվները ներկայումս գործում են, սակայն նրանց գործողությունները չեն կարգավորվում որևէ հատուկ դրույթով, ինչը բազմաթիվ կասկածներ է առաջացրել նրանց գործողությունների և նրանց կողմից տրամադրած տեղեկատվության օրինականության վերաբերյալ: Օրենքը վերացնում է այդ անորոշությունները և հստակեցնում, թե ինչ տեղեկատվություն կարող է հավաքագրվել և ինչպես:

Համապատասխանաբար, նոր օրենքը թույլ կտա բիզնեսին ձեռք բերել մասնավոր դետեկտիվ ծառայություններ այնպիսի ձևով, որը շատ ավելի կհամապատասխանի օրենքին, քան՝ մինչ օրենքի ընդունումը:

Լիցենզավորման ընթացակարգի ներդրումը թույլ կտա ապահովել մասնավոր դետեկտիվ ծառայությունների որակի նկատմամբ ավելի բարձր մակարդակի վերահսկողություն:[14]

Ուկրաինայի նախագահը վետոյի է ենթարկել վերոնշյալ օրենքը 2017թ. հունիսի 6-ին և իր դիտողություններով և առաջարկություններով վերադարձրել է երկրի խորհրդարանին: Դրանց համաձայն՝ օրենքի մի շարք դրույթներ հակասում են Ուկրաինայի օրենսդրական ակտերին: Մասնավորապես, Նախագահը նշել է հստակ տարբերակումների բացակայությունը մասնավոր դետեկտիվների և պետական իրավապահ մարմինների գործառույթների միջև: Սա կարող է նպաստել, վերջինիս կարծիքով, մասնավոր դետեկտիվների կողմից այնպիսի օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացմանը, որոնք գտնվում են օպերատիվ (իրավապահ) ստորաբաժանումների բացառիկ իրավասության ներքո:

Նախագահը վերադարձրել է օրենքը խորհրդարան՝ վերջինիս դրույթները այլ իրավական ակտերի հետ համապատասխանեցման նպատակով: Խորհրդարանը կարող է կամ Նախագահի կողմից դրված վետոն հաշվի չառնել և ընդունել այն ձայների երկու երրորդով, կամ՝ հաշվի առնել առաջարկություններն ու դիտողությունները, փոխել օրենքի տեքստը և ընդունել այն որպես նոր օրենք՝ ձայների պարզ մեծամասնությամբ:[15]

Չինաստանում, օրինակ, մասնավոր դետեկտիվների ծառայությունները լայն տարածում ունեն, և վերջիններիս ծառայությունները նեռարվում են նաև հետաքննություն կոռուպցիայի վերաբերյալ, որը պատվիրակվում է Չինաստանում գտնվող բազմազգի կորպորացիաների կողմից:[16]

[14] http://www.cms-lawnow.com/ealerts/2017/04/private-detective-acticity-to-be-legalized-in-ukraine
[15] http://www.cms-lawnow.com/ealerts/2017/06/president-vetoes-the-law-on-private-detective-activity-in-ukraine
[16] http://www.chinadaily.com.cn/china/2015-06/12/content_20979772.htm

ԱՄՆ-ում, օրինակ՝ Իլլինոյիս նահանգում, վերապատրաստման դասընթացները հնարավորություն են տալիս մասնագիտանալ 6 ոլորտում, որոնցից մեկը՝ բիզնեսն է:[17]

Մի շարք հանրահայտ մասնավոր հետաքննությունների ծառայություն մատուցող կազմակերպությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերջիններս մատուցում են կորպորատիվ/բիզնես հետաքննություններ, որը կարող է ներառալ ընդհուպ մինչև է աշխատակցի հետաքննությունից մինչև առավել բարդ կոռուպցիոն սխեմաների վերհանում:[18]

Շատ հաճախ, բիզնեսները հայտնվում են այնպիսի իրավիճակում, երբ ակտիվները բացակայում են, թղթավարությունը ճշգրիտ չի իրականացվում կամ ոչ օրինական եկամուտներ են ստացվում: Մասնավոր դետեկտիվը կարող է պարզել, արդյո՞ք ակտիվները ֆիկտիվ են, կատարվել են արդյո՞ք ոչ պատշաճ վճարումներ կամ, արդյո՞ք առկա են այլ խեղաթյուրումներ կամ կեղծիքներ: Մասնավոր դետեկտիվները կարող են հետևել նաև մեղավոր կողմին ֆոնային ստուգումների միջոցով (background check), և ակտիվների որոնումները կբացահայտեն փողի հետքերը:

Բացի այդ, բիզնեսները, մասնավոր դետեկտիվների միջոցով, կկարողանան ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն իրենց պոտենցիալ գործընկերներին վերաբերյալ, որպեսզի հասկանան, արդյո՞ք արժե վերջիններիս հետ համատեղ գործունեությամբ զբաղվել և գնահատեն ռիսկերը: Վերջինս էլ կնպաստի բարենպաստ բիզնես միջավայրի ստեղծմանը:

Նշենք, որ ՀՀ-ում մասնավոր հետաքննիչների գործունեությունը չի կարգավորվում:

[17] http://privateinvestigatoredu.org/illinois/
[18] https://www.pinkerton.com/investigations/

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՐԶԵՑՄԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Համաձայն «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի՝ «1. Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ ապրանքների զննման և հաշվառման) համար գանձվում է 3500 դրամ մաքսավճար: *(...)* 5. Մաքսային մարմինների կողմից յուրաքանչյուր փաստաթղթի (ձևաթղթի) տրամադրման համար գանձվում է 1000 դրամ մաքսավճար: *(...)* 9. Տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության համար մաքսավճարը գանձվում է հետևյալ չափերով. 1) մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաների համար՝ 2000 դրամ. 2) այլ տրանսպորտային միջոցների համար՝ 5000 դրամ:»

Համաձայն «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի՝ «Մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերի կիրառումը» վերտառությամբ 77-րդ հոդվածի՝

«1. Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման նպատակով կիրառվում են մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Օրենսգրքով և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

2. Ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման նպատակով կիրառվում են Մաքսային միության Միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Օրենսգրքով և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

Արտահանման մաքսատուրքերի հաշվարկման նպատակով կիրառվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ այն ապրանքների համար սահմանված սակագները, որոնք ներառվել են Մաքսային միության անդամ պետությունների՝ երրորդ երկրների նկատմամբ արտահանման մաքսատուրքերի կիրառման հետ կապված հարցերը կարգավորող միջազգային պայմանագրերին համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի կողմից ձևավորվող ապրանքների համահավաք ցանկում:

Հարկերի հաշվարկման համար կիրառվում են Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերը, որի տարածքում ապրանքները ձևակերպվում են մաքսային ընթացակարգով կամ որի տարածքում հայտնաբերվել է մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման փաստը, եթե այլ բան սահմանված չէ սույն կետով:

Եթե Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով սահմանված կարգով պարզվի (հաստատվի), որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները գտնվում են Մաքսային միության այլ անդամ պետության տարածքում, ապա հարկերի հաշվարկման նպատակով կիրառվում են Մաքսային միության այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերը»:

Այնուհետև, համաձայն **«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածի 3-րդ մասի՝**

«Հայաստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի և սույն Պայմանագրի 1-ին հավելվածով նախատեսված միջազգային այլ պայմանագրերի առանձին նորմերի կիրառումն իրականացվում է սույն Պայմանագրի 3-րդ հավելվածով նախատեսված պայմաններին և անցումային դրույթներին համապատասխան և հաշվի առնելով սույն Պայմանագրի 4-րդ հավելվածով սահմանված ցանկով նախատեսված ապրանքների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագների կիրառման վերաբերյալ պայմանավորվածությունները:» Միաժամանակ նաև նշենք, որ ներկայումս ՀՀ-ում տրանսպորտային միջոցների ներկրման դեպքում գործում է Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) միասնական մաքսային դրույքաչափը[19]:

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի» մասին ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածի՝

«Հոդված 3.1. Սույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են *(...)* 3) անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե՝ *(...)* գ. նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվում ապրանքներ, որոնց ներմուծումը, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համարվում է ձեռնարկատիրական

[19] http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Pages/default.aspx

գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, կամ Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվում ավտոմեքենաներ, բացառությամբ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ավտոմեքենաների»:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ բնապահպանական և բնօգտագործման վճարողներ են համարվում ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են նշված օրենքի 4 և 5 հոդվածներով սահմանված գործառույթներ:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ բնապահպանական վճարի տեսակներն են՝ *(...)* ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար:

Ինչպես կարող ենք նկատել, երրորդ երկրից ՀՀ տարածք տրանսպորտային միջոց ներկրելու համար, ֆիզիկական անձը պետք է վճարի մաքսատուրք, ավելացված արժեքի հարկ և բնապահպանական վճար: Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը ներկրվում է ԵՏՄ տարածքից, ապա վճարման են ենթակա միայն մաքսային վճարներ և բնապահպանական վճարը: Վճարման են ենթակա նաև օրենքով սահմանված մաքսավճարներ:

Նաև հարկ է նշել, որ **«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** <u>Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է 0 տոկոս:</u>

Գաղտնիք չէ, որ կոռուպցիոն ռիսկերի առաջացման հիմնական նախադրյալը՝ դա անձի անիրազեկությունն է, ինչը կամա թե ակամա հնարավոր է դարձնում տարբեր չարաշահումների առաջացումը:

«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացված «Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսազերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում» ծրագրի շրջանակում բարեփոխումների իրականացմանն ուղղված առաջարկներ մշակելու համար սոցիոլոգիական հետազոտության ուսումնասիրությունը տրանսպորտային միջոցների ներկրման գործընթացի վերաբերյալ վեր է հանել շահառուների իրազեկվածության մակարդակի հետևյալ պատկերը[20].

[20] Տե՛ս «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացված «Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսազերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում» ծրագրի շրջանակում բարեփոխումների իրականացմանն ուղղված առաջարկներ մշակելու համար սոցիոլոգիական հետազոտություն, էջ 7
http://iravaban.net/wp-content/uploads/2016/09/Report-on-the-sociological-survey-arm.pdf



Ակնհայտ է, որ շահառուների համար բարդություն է ներկայացում ինքնուրույն պարզելու Հայաստանի Հանրապետության տարածք տրանսպորտային միջոցների ներկրման համար նախատեսված վճարների տեսակներն ու դրույքաչափերը, առավել ևս երբ ներկայումս սահմանված է միասնական մաքսային դրույքաչափեր, որը հասանելի է ռուսերեն լեզվով, ինչը կրկնակի բարդություն և լրացուցիչ խոչընդոտներ է առաջացնում:

Ուստիև, հիմք ընդունելով վերոգրյալը, կարծում ենք, որ **Հայաստանում հարկավոր է ներդնել այնպիսի առցանց գործիք, որը ներկրողներին հնարավորություն կտա ՀՀ տարածք ներկրել տրանսպորտային միջոցներ իրենց համար կանխատեսելի և պարզեցված եղանակով:** Մասնավորապես, առաջարկվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում ներդնել տրանսպորտային միջոցների մաքսային վճարների առցանց հաշվիչ, որը հնարավորություն կտա անձին նախքան տրանսպորտային միջոցների ներկրումը, ինքնուրույն նշված գործիքի կիրառմամբ պարզել, թե՞ ինչ կարժենա ՀՀ տարածք ներկրվող տրանսպորտային միջոցների մաքսային վճարները և հարկերը: Նշված գործիքը բավականին պարզ է և պահանջում է ընդամենը մի քանի ելակետային տվյալներ մաքսային վճարների գնի որոշման համար: Մասնավորապես, համակարգից օգտվելու դեպքում շահառուն պետք է ընտրի տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի որոշման հետևյալ 6 մեթոդներից այն մեկը, որով նախատեսում է իրականացնել տրանսպորտային միջոցի ներկրումը.

1. *մաքսային արժեքի որոշումն՝ ըստ գործարքի գնի մեթոդի,*
2. *մաքսային արժեքի որոշումն՝ ըստ նույն ապրանքների գործարքի գնի,*
3. *մաքսային արժեքի որոշումն՝ ըստ համանման ապրանքների գործարքի գնի,*
4. *Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշում,*

5. *մաքսային արժեքի որոշումն՝ ըստ հաշվարկային արժեքի,*
6. *մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդ:*

Մաքսային արժեքի որոշման մեթոդի ընտրությունից հետո, շահառուին առաջարկվում է լրացնել տրանսպորտային միջոցին վերաբերող հետևյալ տվյալները.

- *Նոր սակագին (New tariff).*
- *Մեխանիկական է, թե՞ էլեկտրոնային, թե երկուսն էլ (Hybrid).*
- *Ղեկը ձախակողմյան է (այդ թվում աջից ձախ տեղափոխված) (Left Wheel/ moved).*
- *Վաճառքի տարեթիվը (Output year).*
- *Շարժիչի հզորությունը (Engine):*

Հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին, և դրանից բխող իրավակարգավորումները, նպատակահարմար է նախքան վերը նշված տվյալների լրացնելը, համակարգ մուտք գործելուց հետո շահառուին պարտադիր կերպով առաջարկել ընտրել առաջարկվող երկու հետևյալ տարբերակներից մեկը.

- *Տրանսպորտային միջոցը ներկրվում է ԵՏՄ տարածքից.*
- *Տրանսպորտային միջոցը ներկրվում է երրորդ երկրից:*

Այս հարցի պարզեցումից հետո միայն, համակարգը հնարավորություն կունենա մյուս էլեկտային տվյալների մուտքագրումից հետո ավտոմատ կերպով հաշվարկել կոնկրետ տրանսպորտային միջոցի ներկրման համար վճարման ենթակա մաքսային վճարները և հարկերը:

Պետք է նկատել, որ այս գործիքի միջոցով մաքսային վճարների գանձնման համակարգի պարզեցումը հնարավորություն կտա բարձրացնել այս գործընթացի արդյունավետությունը, կանխատեսելիությունը, հայեցողական գործողությունների բացառումը, հանրության վստահության մակարդակը, իսկ ներմուծման գործընթացի նախնական պլանավորումը ու կանխատեսելիությունը՝ կնպաստի նաև մաքսային հսկողության բարելավմանն ու ծանրաբեռնվածության թեթևացմանը: Հարկ է նշել, որ համանման փորձ առկա է նաև մեր հարևան Վրաստանում:[21]

Միջազգային փորձ

[21] http://rs.ge/Default.aspx?sec_id=5091&lang=2

Ուսումնասիրման են ենթարկվել նաև այլ երկրների փորձը, որտեղ սակայն, տրանսպորտային միջոցների ներկրման մասին տեղեկությունները տրված են բանաձևերի տեսքով, և ոչ այնքան պարզեցված են, որքան վերը առաջարկված մոդելը: Մասնավորապես, ուսումնասիրվել է Եվրոպական հանձնաժողովի[22] Հարկային և Մաքսային բաժնի կողմից գործարկվող առցանց գործիքը, որտեղ ներառված են ոչ միայն տրանսպորտային միջոցների (թեթև մարդատար մեքենաներ, բեռնատար մեքենաներ, նավեր, ինքնաթիռներ, գնացքներ և այլն), այլև՝ այլ ապրանաքատեսակների դեպքում գործող մաքսային վճարների դրույքաչափերը: Այդ ապրանքատեսակներից կարող են լինել՝ կենդանական, բանջարեղենային, հանքային, քիմիական, գործվածքային և այլ արտադրանքները, ռետինե և հնառճ իրերը և այլն: Այս գործիքը ենթակա է կիրառման մի շարք եվրոպական երկրներում: Ուսումնասիրվել են նաև Կիպրոսի[23], Տրինիդադի և Տոբագոյի Հանրապետության[24] (հարկ է նշել, որ այստեղ հաշվարկման են ենթարկվում ոչ միայն տրանսպորտային միջոցները, այլև՝ տրանսպորտային միջոցների բաղկացուցիչներ և այլ ապրանքներ) և այլ երկրների առցանց գործիքները:

Ուսումնասիրված երկրների շարքում է նաև Բոտսվանայի միասնական եկամուտների համակարգը[25]: Այստեղ առկա տեղեկությունները ներկայացվում են երկու խմբերի համար. ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար: Իսկ մաքսային և հարկային տուրքերը ներկայացված են աղյուսակի տեսքով:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում ներկայումս տեղադրված տեղեկությունը ընդհանուր է, և հիմնականում ներկայացնում է ՀՀ օրենսդրության կարգավորումները[26]:

Ամփոփում

Այսպիսով, ամփոփելով սույն վերլուծությունը և միջազգային փորձի ուսումնասիրությունը, կարծում ենք, որ Հայաստանում նույնպես հարկավոր է ներդնել մաքսային վճարների գանձման առցանց հաշվիչ՝ հիմնվելով Վրաստանի փորձի վրա: Այստեղ, սակայն, կարևոր է նախատեսել հարց այն մասին, թե տրանսպորտային միջոցը որտեղի՞ց է ներկրվում. ԵՏՄ տարածքի՞ց, թե՞ երրորդ երկրից: Ընդ որում, հաշվի առնելով շուկայական գների տատանումները, կարծում ենք

[22] http://ec.europa.eu/taxation_customs/dds2/taric/taric_consultation.jsp

[23] http://www.mof.gov.cy/mof/customs/customs.nsf/All/56C4D9A3AB5A5B0AC2257488003A6B03

[24] http://www.customs.gov.tt/importing/duty-calculator

[25] http://www.burs.org.bw/

[26] http://petekamutner.am/Content.aspx?itn=csCICustomsFees

անհրաժեշտ է նաև մաքսային վճարների սահմանման դեպքում նախատեսել դրույքաչափերի նվազագույն և առավելագույն սանդղակներ, որը հնարավորություն կտա նաև մաքսային ծառայողներին խուսափել շահառուների հետ հարաբերություններում առաջացող հակասություններից: